Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

2022 թվականին կայացած վարույթներ

Սույն ուսումնասիրությունն իրականացվել և զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան»-ի ֆինանսավորմամբ:

Զեկույցում տեղ գտած վերլուծությունները, տեսակետները և եզրահանգումները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան» կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Զեկույցը կազմել են Հասմիկ Հարությունյանը, Արաքս Մելքոնյանը: Բարձրագույն դատական խորհրդում դատավորների կարգապահական վարույթների քննության մշտադիտարկումը իրականացրել է Դիանա Հարությունյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

Մեթոդաբանություն 5

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 7

2. ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ 21

3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 31

3. 1. Կարգապահական խախտում արձանագրող որոշումների ու տույժի տեսակի հիմնավորումները 33

3. 2. Էական կարգապահական խախտման հիմքով դատավորի լիազորությունների դադարեցումը որպես տույժ կիրառելու դեպքերը 39

3. 3. Կարգապահական խախտման բացակայություն արձանագրող որոշումների հիմնավորումները 44

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 47

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 50

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դատավորների կարգապահական պատասխանատվությունը դատական իշխանության անկախության, արդյունավետության և հաշվետվողականության ապահովման կարևորագույն ինստիտուտներից է, որը պետք է իրականացվի օրինականության, դատական գործունեությանը չմիջամտելու, դատավորների անկախությունը հարգելու և հեղինակությունը բարձր պահելու, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության, կամայականության բացառման սկզբունքների հիման վրա:

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Հայաստանի Հանրապետությունում լուծվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից՝ ի ապահովումն պետական իշխանության այլ ճյուղերի կողմից դատական իշխանության անկախության և ազդեցության բացառման, ինչպես նաև նրանց հաշվետվողականության բարձրացման: Բարձրագույն դատական խորհուրդը կարգապահական պատասխանատվության հարցերը քննում է վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների միջնորդությունների հիման վրա:

2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները խոստանում էին նաև ՀՀ Դատական համակարգում համակարգային փոփոխություններ, այդ թվում՝ վեթինգի /զտման/ գործիքակազմի կիրառմամբ, ինչը, սակայն, կյանքի չկոչվեց: Փոխարենը, վերջին շրջանում ՀՀ գործադիր իշխանության և արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների ինստիտուտը դիտարկվեց որպես դատական իշխանությունում վեթինգի գործիքակազմ և Արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ հարուցվող կարգապահական վարույթների քանակի ավելացման և այդ նպատակով ռեսուրսների ներգրավման մասին հայտարարվեց[1]:

Հաշվի առնելով դատավորների կարգապահական պատասխանատվության վարույթների քննության նկատմամբ հանրային վերահսկողության և Բարձրագույն դատական խորհրդի և կարգապահական վարույթ հարուցող մարմինների հաշվետվողականության ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև դատավորների կողմից թույլ տրվող խախտումների բնույթի և ցուցաբերվող վարքագծի ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից տարիներ շարունակ իրականացվում է դատավորների կարգապահական

[1] Առավոտ, Կարեն Անդրեասյան. «Շատ շուտով կարող ենք ունենալ վեթինգի առաջին դրսևորումներն իմ պաշտոնավարման ժամանակ», 30. 09. 2021թ. https://www.aravot.am/2021/09/30/1219121/

պատասխանատվության ենթարկելու գործընթացների մշտադիտարկում և կայացված որոշումների ուսումնասիրություն:

Սույն հետազոտության շրջանակներում մշտադիտարկվել և ուսումնասիրվել են 2022թ. ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից քննված բոլոր 24 վարույթները:

Զեկույցն ամփոփում է 2022 թվականի ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից քննված դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթների մշտադիտարկման և Բարձրագույն դատական խորհրդի (հետայսու տեքստում՝ ԲԴԽ կամ Խորհուրդ) որոշումների ուսումնասիրության արդյունքները՝ նպատակ ունենալով վերհանել դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի օրենսդրական և գործնական խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ:

Մեթոդաբանություն

Ուսումնասիրության շրջանակներում իրականացվել է Բարձրագույն դատական խորհրդում դատավորների կարգապահական վարույթների քննության մշտադիտարկում: Կազմակերպության կողմից մշտադիտարկվել են Խորհրդի կողմից 24 վարույթներով իրականացված բոլոր նիստերը: Ընդհանուր առմամբ տեղի են ունեցել և դիտարկվել են 81 նիստեր, ներառյալ՝ Խորհրդի որոշման հրապարակման նիստերը:

Ուսումնասիրության շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել են ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված Խորհրդի կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումները, վերլուծության համար օգտագործվել են ինչպես քանակական, այնպես էլ որակական մեթոդներ:

Կարգապահական պատասխանատվության վարույթների մշտադիտարկման և Խորհրդի որոշումների ուսումնասիրության արդյունքում դուրս բերված տվյալները ներբեռվել են պատրաստված կիսաձևայնացված հարցաշարում՝ բաղկացած մի շարք թեմատիկ բաժիններից: Հարցաշարի ձևայնացված հատվածներում տվյալները մուտքագրվել են նախօրոք մշակված կոդերով: Կիսաձևայնացված հատվածներում որոշումներից դուրս են բերվել տեքստային բնույթի ամբողջական մեջբերումներ: Առանձնացվել է նաև կարգապահական վարույթի յուրաքանչյուր փուլին վերաբերելի գործողությունների վերաբերյալ տվյալները, կայացվող որոշումների հիմնավորումներն ու հիմքերը: Ուսումնասիրությամբ իրականացվել է դուրս բերված տեղեկությունների համադրում՝ քանակական տվյալներ ստանալու նպատակով:

Տեքստային բնույթի տեղեկությունները ենթարկվել են որակական վերլուծության՝ ըստ դատավորի կողմից կարգապահական խախտում դիտարկված կամ չդիտարկված գործողության նկարագրության, յուրաքանչյուր խախտման վերաբերյալ դատավորի բացատրության, կարգապահական խախտման վերաբերյալ ԲԴԽ կողմից տրված գնահատականի[2]:

[2] ԻՊԱՍ, Դատավորների կարգապահական պատասխանատվության պրակտիկայի ուսումնասիրություն, 1-ին մաս, **Դատավորների կարգապահական պատասխանատվության պրակտիկայի ուսումնասիրություն Մաս 1-ին**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիտարկման ենթարկված 24 կարգապահական վարույթներից 23-ը վերաբերել են դատավորների, մեկը՝ ԲԴԽ լիազորությունները կասեցված նախագահին:

Կարգապահական վարույթներ հարուցված են եղել հետևյալ դատարանների դատավորների նկատմամբ՝ 13-ը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորների, 4-ը վերաքննիչ քրեական դատարանի դատավորների, 2-ը վարչական վերաքննիչ դատարանի, մեկական՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի, ինչպես նաև վարչական դատարանի, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների նկատմամբ:

Աղյուսակ 1. ԲԴԽ կողմից քննված կարգապահական վարույթների քանակը՝ ըստ դատարանների

Դատարան	Գործերի քանակ
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան	13
Վերաքննիչ քրեական դատարան	4
Վարչական վերաքննիչ դատարան	2
Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան	1
Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	1
Վարչական դատարան	1
Վերաքննիչ քաղաքացիական դատարան	1

Կարգապահական վարույթ հարուցելու առիթները

ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է կարգապահական վարույթ հարուցելու առիթները.

1) անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը.

2) կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները.

3) վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը.

4) վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

Դիտարկված գործերով դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների հարուցման առիթ են հանդիսացել՝ 12 գործով ֆիզիկական կամ իրավաբանական անձի դիմումը, որոնցից 6 գործով դիմումը ներկայացվել է փաստաբանների կողմից: 4 գործով վարույթը հարուցվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդման հիման վրա, ընդ որում՝ այս գործերով վարույթը հարուցելու դիմում ներկայացրել են երեք գործով Գլխավոր դատախազը[3] կամ պաշտոնակատարը[4]: 4 կարգապահական վարույթ հարուցվել է վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերման հիման վրա: Երեք դեպքում կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության ծառայության պետի կամ պաշտոնակատարի կողմից նախարարին ներկայացված զեկուցագրերը[5], մեկ գործով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից դատավորի հայտարարագրի ուսումնասիրության հիման վրա: Երկու վարույթ հարուցվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերման հիման վրա:[6] Մեկ վարույթի հարուցման առիթ է հանդիսացել զանգվածային լրատվության միջոցի հրապարակումը:[7]

ԲԴԽ անդամ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել զանգվածային լրատվության միջոցի հրապարակումը:

Աղյուսակ 2. ԲԴԽ կողմից քննված կարգապահական վարույթների հարուցման առիթները

Առիթ	Վարույթների քանակ
Անձի դիմումի հիման վրա	12

[3] Տես ԲԴԽ-23-Ո-Կ-5 որոշումը, ԲԴԽ-33-Ո-12 որոշումը, ԲԴԽ-89-Ո-Կ-22 որոշումը:
[4] Տես ԲԴԽ-35-Ո-Կ-7 որոշումը:
[5] Տես ԲԴԽ-78-Ո-Կ-18 որոշումը, ԲԴԽ-2-Ո-Կ-1 որոշումը, ԲԴԽ-24-Ո-Կ-6 որոշումը:
[6] Տես ԲԴԽ-80-Ո-Կ-21 որոշումը, ԲԴԽ-105-Ո-Կ-26 որոշումը:
[7] Տես ԲԴԽ-116-Ո-Կ-27 որոշումը:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի դիմումի հիման վրա	4
վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը	4
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերման հիման վրա	2
Զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա	2

Կարգապահական վարույթ հարուցած մարմինը

Դիտարկված գործերով վարույթ հարուցելու իրավասություն տվյալ ժամանակահատվածի օրենսդրական կարգավորումներով ունեցել են Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը և լիազոր մարմինը՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարի:[8]

Ընդհանուր առմամբ, 2022թ. ԲԴԽ կողմից քննված դատավորների նկատմամբ կարգապահական վարույթները հարուցել են Արդարադատության նախարարը՝ 18 վարույթ, Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից 4 վարույթ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ 1 վարույթ:

Դատական օրենսգրքի՝ 85-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է Բարձրագույն դատական խորհրդի առնվազն երեք անդամի միջնորդության

[8] ՀՀ դատական օրենսգիրք, 145-րդ հոդվածի 1-ին մաս:

հիման վրա: 2022թ. ԲԴԽ անդամի (լիազորությունները կասեցված նախագահի) նկատմամբ կարգապահական մեկ վարույթը հարուցվել է ԲԴԽ անդամների հանձնախմբի որոշմամբ:

2022թ.-ին Բարձրագույն դատական խորհրդի կողմից քննված վարույթները՝ ըստ միջնորդություն ներկայացրած մարմինների



Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը

ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, որոնք են.

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ էական կարգապահական խախտում է համարվում նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը

հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և/կամ ազատությունների հիմնարար խախտման կամ դատական իշխանության հեղինակազրկման:

Նմանապես, էական խախտում է վերը հիշատակված երկրորդ կետով նախատեսված խախտումը, որը դրսևորվել է օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1- 4-րդ, 8-րդ և 9-րդ, 11-րդ և 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 7-րդ և 8-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված դատավորի պարտականությունների խախտմամբ և պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ, ինչպես նաև երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը[9]:

Չնայած վերջին տարիներին ՀՀ Դատական օրենսգրքում կարգապահական պատասխանատվության հիմքերի առնչությամբ տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններին, մշտադիտարկման արդյունքում վեր է հանվել, որ օրենսդրական ամրագրում ստացած հիմքերը կանխատեսելիության և կոնկրետության տեսանկյունից դեռևս հստակեցման կարիք ունեն:

Ուսումնասիրված գործերով վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների կողմից դատավորի նկատմամբ վարույթ հարուցելու հիմքեր ներկայացվել են.

1 դեպքում դատավարական իրավունքի նորմի խախտումը և դատավորի վարքագծի կանոնները խախտելը, որոնք կատարվել են դիտավորությամբ:

3 գործով նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները, որոնք կատարվել են կոպիտ անփութությամբ:

2 գործով վարքագծի կանոնների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ:

6 գործով դատավարական իրավունքի նորմի կամ նորմերի խախտումը, որոնք կատարվել են դիտավորությամբ:

7 գործով դատավարական իրավունքի նորմի խախտումը և դատավորի վարքագծի կանոնների խախտումները, որոնք կատարվել են կոպիտ անփութությամբ:

2 գործով դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է կոպիտ անփութությամբ:

1 գործով վարքագծի կանոնի խախտումը, որը կատարվել է կոպիտ անփութությամբ: 1 գործով վարքագծի կանոնի խախտումը, սակայն հաշվի առնելով,

[9] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 142:

որ վարույթի բովանդակային քննարկում տեղի չի ունեցել ԲԴԽ-ում և վարույթի վերաբերյալ վերջնական ակտը հրապարակված չէ, մեղքի ձևը հստակեցված չէ:

1 գործով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմք են հանդիսացել դատավարական իրավունքի և վարքագծի կանոնների խախտումները, որոնք կատարվել են ինչպես դիտավորությամբ, այնպես էլ կոպիտ անփութությամբ:

ԲԴԽ լիազորությունները կասեցված նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացել է դատավորի վարքագծի կանոնների խախտումը, այն է՝ լրատվական միջոցին տրված հարցազրույցով թույլ է տվել դատավորի վարքագծի կանոնների խախտում:

Անդրադառնանք ուսումնասիրված կարգապահական վարույթների հիմքերի բովանդակությանը:

Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից ներկայացված միջնորդությունները վերաբերել են հետևյալին.

1. Գործերից մեկով կարգապահական վարույթի հարուցման հիմք է հանդիսացել այն, որ դատավորը մերժել է իրավաբանական փաստի հաստատման դիմումը, այն է՝ մինչև երեխայի ծնունդը մահացած ծնողի հայրության ճանաչման փաստը, այն հիմնավորմամբ, որ չի պահպանվել փաստը հաստատելու արտադատական կարգը: Վարույթ հարուցող մարմինը վկայակոչել է «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հայրության որոշման պետական գրանցման հիմքերը՝ բացի հայրության, հայրության ճանաչման փաստի որոշման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռից, ենթադրում են երեխայի հոր կողմից համապատասխան իրավասու մարմիններ ներկայացվող դիմումը: Սակայն տվյալ իրավիճակում սա անհնար էր, քանի որ երեխայի հայրը մահացել էր մինչև երեխայի ծնունդը:

2. Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմք էր հանդիսացել առանց ամբաստանյալի և նրա պաշտպան(ներ)ի մասնակցության դատախազի՝ ոչ հօգուտ ամբաստանյալի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցի վերաբերյալ ներկայացված վերաքննիչ բողոքը քննության առնելը և որոշում կայացնելը: Ըստ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդության՝ դատավորը չէր կարող առանց կողմերի մասնակցության իրականացնել բողոքի քննություն, քանի որ ըստ Քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ամբաստանյալի մասնակցությունը պարտադիր է վերաքննիչ դատարանի նիստին, եթե բողոք է բերել դատախազը՝ ոչ հօգուտ նրա: Հետևաբար, դատավորի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի նորմի խախտում:

3. Հանձնաժողովի կողմից նույն դատավորի նկատմամբ հարուցված մեկ այլ վարույթի հիմք է հանդիսացել այն, որ դատավորը կայացրել է որոշում՝

նախաքննության փուլում մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորման ժամկետը երկարացնելու մասին, մինչդեռ գործով մինչդատական վարույթը եղել է ավարտված, գործը գտնվել է դատական քննության փուլում և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, դատական քննություն նշանակելու մասին անդրադառնալով խափանման միջոցի հարցին, արդեն իսկ ամբաստանյալի կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ ընտրել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

4. Վերաքննիչ քրեական դատարանի այլ դատավորի նկատմամբ Հանձնաժողովի կողմից հարուցված կարգապահական մեկ այլ վարույթի հիմք է հանդիսացել այն, որ դատավորը կայացված որոշմամբ դատախազի բողոքը բավարարել է, բեկանել և փոփոխել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը, բավարարել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչի միջնորդությունը և մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորում 2 ամիս ժամկետով: Անձին կալանավորելու վերաբերյալ որոշումը կայացվել է 2022թ. հունվարի 13-ին, 2022թ. հունվարի 14-ին կողմերին տրամադրել է կայացված որոշման հիման վրա կազմված քաղվածք, որի հիման վրա անձը կալանավորվել է: Մինչդեռ որոշման օրինակը կողմերին հասանելի է դարձել միայն 2022թ փետրվարի 10-ին՝ առձեռն ստանալու միջոցով:

Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հարուցված վարույթներից երեքը, ըստ էության, վերաբերել են կալանավորման կիրառման հարցերին:

Արդարադատության նախարարի կողմից Բարձրագույն դատական խորհրդին ներկայացված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունները վերաբերել են հետևյալ հիմքերին.

1. Կարգապահական խախտման հիմք հանդիսացել է այն, որ դատավորը մեղադրյալի նկատմամբ կալանավորման առկայության հարցը քննարկելով քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 10-ին մասով նախատեսված արարքների շրջանակներում, որոնք դասվում են միջին ծանրության հանցագործությունների շարքին, քննության առարկա չի դարձրել մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարքների վաղեմության ժամկետն անցած լինելու հանգամանքը և անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել է կալանավորումը:

2. Կալանավորման կիրառմանը վերաբերող մեկ այլ վարույթի հիմք է ներկայացվել այն, որ դատավորը, քննության առնելով մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, որոշել է մերժել այն՝ վերջինիս վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածի բացակայության պատճառաբանությամբ: Ըստ Նախարարի՝ դատավորը սխալ է

մեկնաբանել Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածը (մեկնաբանել և գնահատել է մինչև 14.12.2019 թվականը գործող խմբագրությամբ)՝ հանգելով ոչ իրավաչափ եզրահանգման Քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքի հիմնավոր կասկածի բացակայության վերաբերյալ, և արդյունքում չի քննարկել կալանավորման հիմքերի առկայության հարցը:

3. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի մեկ այլ դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի հիմք Նախարարի կողմից գնահատվել է այն, որ դատավորի կայացրած որոշումը ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերալ պատճառաբանված չէ: Ըստ Արդարադատության նախարարի՝ Դատավորը գրավի թույլատրելիության հարցը լուծելիս որոշման պատճառաբանական մասում ընդհանրապես չի անդրադարձել և գնահատման չի ենթարկել ամբաստանյալի կողմից վարույթն իրականացնող մարմնի կողմից թաքնվելու հիմքն այն պայմաններում, երբ տվյալ քրեական գործով նախկինում ամբաստանյալի նկատմամբ քննությունից թաքնվելու հիմքով հայտարարված է եղել հետախուզում: Չի պարզաբանել, թե արդյո՞ք գրավի կիրառումը չեզոքացնում է ամբաստանյալի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու ռիսկը: Բացի այդ ամբաստանյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառած լինելու դեպքում պաշտպանական կողմի միջնորդությամբ նրան կալանքից ազատ արձակելը ըստ քրեական դատավարության տվյալ պահին գործող օրենսդրության, հնարավոր է միայն այն դեպքում, երբ վկայակոչվում են այնպիսի նոր հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել կամ չէին կարող հայտնի լինել նախկինում: Դատարանը որպես նոր հանգամանք մատնանշել է, որ ամբաստանյալը վատառողջ է, ունի բուժման կարիք և վերջինիս խնամքին է գտնվում մանկահասակ երեխա: Մինչդեռ դատարանի որոշումների և վարույթում գտնվող նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ նշված հանգամանքները նախկինում դատարանին հայտնի են եղել:

4. Մեկ այլ գործով կարգապահական խախտման հիմք հանդիսացել են դատավորի կողմից մեկից ավելի դատական գործերով թույլ տրված ենթադրյալ խախտումները: Առաջին դեպքում կարգապահական խախտման հիմք է հանդիսացել այն, որ առաջին ատյանի դատարանը մերժել է կողմի՝ վճռի մեջ առկա վրիպակը ուղղելու վերաբերյալ դիմումը: Հաջորդ գործով վարույթի հարուցման հիմք հանդիսացել է նաև այն հանգամանքը, որ կողմերի կողմից հաշտության համաձայնության ներկայացումից առավել քան 13 ամիս անց դատարանի կողմից չի հաստատվել հաշտության համաձայնությունը: Երրորդ դատական գործով, որը վերաբերում էր դիմումատուի որդուն անհայտ բացակայող ճանաչելու պահանջի, Դատարանի կողմից վերջնական դատական ակտը հրապարակվել է դիմումը վարույթ ընդունելու որոշման կայացման պահից առավել քան 10 ամիս անց:

5. Դատավորի վարքագծի կանոնի խախտում է դիտարկվել այն, որ դատավորը իր օգնականի միջոցով և վերջինիս կողմից դատարանի նախագահին ներկայացված

զեկուցագրերով դատական գործերը համապատասխան թվով և հատորներով հանձնել է նախագահի տնօրինությանը՝ համակարգչային ծրագրի միջոցով դրանց վերաբաշխումը կազմակերպելու նպատակով: Ըստ Արդարադատության նախարարի՝ Դատավորն իր վարույթում գտնվող դատական գործերն ամենամյա արձակուրդում գտնվելու հիմքով հանձնել է վերաբաշխման այն դեպքում, երբ ամենամյա արձակուրդում գտնվելու հանգամանքը ԲԴԽ որոշմամբ նախատեսված չէ որպես դատական գործերի վերաբաշխման հիմք:

6. Դատավորի վարքագծի կանոնների խախտման հիմքով հարուցված հաջորդ վարույթը վերաբերել է նրան, որ դատավորը իր կողմից վարվող ավտոմեքենայով վթարի ենթարկվելուց հետո դրա վերաբերյալ իրականացվող վարույթի շրջանակներում չի ենթարկվել իր ծառայողական պարտականություններն իրականացնող ոստիկանի օրինական պահանջներին, ցուցաբերել է անհարգալից վերաբերմունք, ապա նրանց հասցեին հնչեցրել վիրավորական արտահայտություններ:

7. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական կազմի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսացել այն, որ Վերաքննիչ դատարանի կողմից 14.07.20 թվականին կայացվել է վերաքննիչ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով շարունակելու մասին որոշում, որի արդյունքում նշանակված նիստը չի կայացել և վերաքննիչ բողոքի քննությունը և դրա վերաբերյալ որոշումը կայացվել է գրավոր ընթացակարգով՝ խախտելով քաղաքացիական դատավարության օրենսգրքի 374-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը: Որպես խախտման հիմնավորում Նախարարի կողմից ներկայացվել է այն, որ դատավորները որոշումը հիմնավորել են կորոնավիրուսային հիվանդության համավարակը, սակայն այդ նույնը օրը ժամի տարբերությամբ կայացրել է այլ դատական նիստ նույն դատական կազմով:

8. Վարչական դատարանի դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսացել այն, որ իր նախագահությամբ քննված դատական գործով կնքել և ստորագրել է կայացված վճիռը որպես նախագահող դատավոր, սակայն վճռի հրապարակմանը մասնակցել է հեռավար եղանակով, և վճիռը հրապարակվել է կոլեգիալ կազմի մեկ այլ դատավորի կողմից: Ըստ Արդարադատության նախարարի՝ սրանով խախտվել է օրինականության սկզբունքը, դատարանի՝ կոլեգիալ կազմով քննության իրականացման կարգը՝ թույլ տալով դատավարական իրավունքի նորմի խախտում, ինչը դրսևորվել է դիտավորությամբ:

9. Դատական քննության ողջամիտ ժամկետների խնդրին վերաբերել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը այն հիմքով, որ դատավորը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման վիճարկման դիմումը վարույթ ընդունելուց հետո գործի քննությունը օրենքով նախատեսված 1 ամսյա ժամկետի փոխարեն քննել է 8 ամսվա

ընթացքում, գործով կայացված եզրափակիչ դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքում տեղադրվել է նախատեսված ժամկետից մոտ 9 ամիս հետո և մոտ 9 ամիս անց ստացվել համապատասխան անձանց կողմից՝ այն էլ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվելուց հետո:

10. Դատավարական ժամկետների պահպանման խնդրին վերաբերող կարգապահական մեկ այլ վարույթի հիմք է հանդիսացել այն, որ 35 քաղաքացիական գործերով Դատավորի կողմից չեն պահպանվել հայցադիմումը վարույթ ընդունելու կապակցությամբ որոշումները հայցվորին ուղարկելու համար սահմանված ժամկետները՝ խախտելով դատավարական իրավունքի նորմը: Ավելին, ըստ նախարարի՝ 35 քաղաքացիական գործերով ներկայացված հայցադիմումները վարույթ ընդունելու հարցը լուծելու կապակցությամբ ընդունված համապատասխան որոշումները հայցվորին ուղարկելու համար սահմանված ժամկետները դատավորի կողմից պարբերաբար և էապես խախտելու հանգամանքը առաջացնում է ողջամիտ կասկած Դատավորի կողմից առանց արդարադատության շահերը՝ ողջամիտ ժամկետում օրենքով իր իրավասությանը վերապահված հայցերը քննելուն և լուծելուն ուղղված անհրաժեշտ շրջահայացություն և պատշաճ վարքագիծ ցուցաբերելու առնչությամբ:

11. Դատավարական ժամկետների խախտման հիմքով հարուցված մեկ այլ կարգապահական վարույթի հիմքում դրվել է, որ թվով 4 քաղաքացիական գործերով Դատավորի կողմից չեն պահպանվել պարզեցված վարույթի կարգով քննվող գործերով վճիռները հրապարակելու և վճռի օրինակը գործին մասնակցող անձանց ուղարկելու համար քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետները: Մասնավորապես, գործերից երկուսով կայացված վճիռները հրապարակվել է և հայցվորի կողմից ստացվել են շուրջ մեկուկես տարի, երրորդով՝ շուրջ մեկ տարի անց և չորրորդով՝ ավելի քան երկու տարի անց: Ըստ Արդարադատության նախարարի պաշտոնակատարի՝ Դատավորի կողմից դատավարական ժամկետները չպահպանելու հետևանքով խախտվել է հայցվորի՝ իր իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, ինչպես նաև արդար դատաքննության տարր հանդիսացող՝ իր գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքը: Նշվել է նաև, որ միջնորդությամբ ներկայացված՝ դատավորի կողմից կոպիտ անփութությամբ դատավարական իրավունքների նորմերի խախտումներ կատարելու հետ միաժամանակ Դատավորը կոպիտ անփութությամբ թույլ է տվել նաև վարքագծի կանոնների խախտում:

12. Հաջորդ վարույթով կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության հիմքը եղել է այն, որ Դատավորը գործի քննությունը հայտարարելով ավարտված վճռի հրապարակման նշանակված օրը այն չի հրապարակվել, այլ հրապարակվել է դատական իշխանության պաշտոնական կայքէջում հայտարարված

ամսաթվից միայն 1 տարի 7 ամիս անց: Գործի նյութերում բացակայել է նաև վճռի օրինակը հայցվորին ուղարկված լինելու փաստը հավաստող որևէ ապացույց:

13. Դատավարական ժամկետների պահպանմանն առնչվող մեկ այլ կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացել էր այն, որ Դատավորը, չպահպանելով քրեական դատավարության օրենսգրքով դատավճիռը կողմերին ուղարկելու հինգօրյա ժամկետը, այն մեղադրողին ուղարկել է 1 տարի 15 օր անց, թույլ է տվել ինչպես դատավարական իրավունքի նորմի, այնպես էլ վարքագծի կանոնների խախտում:

14. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հիմք է հանդիսացել այն, որ Դատարանը, կայացրած վճռով բավարարելով կերակրողի մահվամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին հայցը, պատասխանողի վրա դրել է նաև կերակրողի ամուսնուն՝ հայցվորին պատճառված վնասը հատուցելու պարտականություն հայցվորի՝ վնասի հատուցում ստանալու իրավունքի ծագման վավերապայմաններից մեկը հավաստող ապացույց (ամուսնության պետական գրանցման վկայական) ներկայացված չլինելու և հետևաբար՝ Դատարանի կողմից նման ապացույց չհետազոտելու պայմաններում: Գործով մյուս հայցվորի՝ հուղարկավորության հետ կապված ծախսերի հատուցման պահանջի մասով նույնպես Դատարանը հաստատված է համարել պահանջի հիմնավորվածությունը, ծախսերի անհրաժեշտությունը և չափի ողջամտությունը՝ դրանք հաստատող ապացույց(ներ) ներկայացված չլինելու և հետևաբար՝ դրանք չհետազոտելու պայմաններում:

15. Մեկ այլ գործով կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսացել այն, որ դատարանը 2 քաղաքացիական գործերով որոշմամբ արձանագրել է, որ անհրաժեշտ է գործը քննել ընդհանուր հայցային վարույթի կարգով՝ բավարարվելով միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 297-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պարզ շարադրանքով, առանց համապատասխան փաստական հիմքերի վկայակոչմամբ հիմնավորելու պարզեցված վարույթը դադարեցնելու նշված նշված գործով կիրառելի իրավական հիմքի առկայությունը և առանց ներկայացնելու դատարանի կողմից փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործնթացի կապակցությամբ կատարված դատողությունների ընթացքն ու դրանց կապը որոշմամբ կատարված եզրահանգումների հետ: 2-րդ գործով կրկին հիմնավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 297-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պարզ շարադրանքով և պատճառաբանելով հայցվորի կողմից հայցի առարկան լրացնելու վերաբերյալ դիմում ներկայացված լինելու հանգամանքով, այն դեպքում, երբ նշված գործի նյութերում առկա չէ հայցվորի կողմից հայցի առարկան լրացնելու վերաբերյալ դիմումը:

16. Հաջորդ կարգապահական վարույթի հարուցման հիմք է հանդիսացել այն, որ դատավորը քաղաքացիական գործով իրականացրել է դատական

ներկայացուցչություն՝ հանդես գալով որպես հայցվորի՝ իր կնոջ ներկայացուցիչ: Դրա վերաբերյալ մյուս կողմի փաստաբանը ներկայացրել է դիրքորոշում, դատավորի կողմից դատական ներկայացուցչություն իրականացնելու, դատավորի վարքագծի կանոններից բխող արգելքի մասին, այնուամենայնիվ Դատավորը իր կողմից հայցվորի օգտին դատական ներկայացուցչություն իրականացնելը չի համարել դատավորի վարքագծի կանոնի խախտում և շարունակել է մասնակցել տվյալ դատական նիստերին որպես դատավարության կողմի՝ հայցվորի ներկայացուցիչ:

2022 թվականի ընթացքում Արդարադատության նախարարի կողմից ԲԴԽ ներկայացվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի ուսումնասիրությամբ վերհանված խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու երկու միջնորդություն:

17. Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճռի ուսումնասիրության[10] հիման վրա հարուցված վարույթներից մեկի հիմք է հանդիսացել այն, որ դատարանի կողմից կայացրած վճռի շրջանակներում չի խոսվում հրապարակային միջոցառմանը մասնակցած անձանց քանակի մասին, և դատարանը շարունակել է հիմք ընդունել այն վարկածը, ըստ որի ցույցի համար անձը ցանկացել է կազմակերպել, և այլոց կոչ է արել միանալ, պահանջել է նախապես իրազեկում՝ առանց պարզելու ներկա գտնվողների թիվը կամ այն հանգամանքները, որոնք նախ և առաջ պայմանավորել են հավաքը՝ ներառյալ այն հարցը, թե արդյոք այն կարող է դիտարկվել որպես ինքնաբուխ հավաք: Դատավորը ապացուցված է համարել այն հանգամանքը, որ նշված օրը սահմանված կարգով հանրահավաք կամ զանգվածային հրապարակային այլ միջոցառում անցկացնելու իրավական հիմքերը բացակայել են՝ դա կապելով իրազեկման բացակայության հետ, այն դեպքում, երբ ոչ զանգվածային հրապարակային միջոցառման իրականացման համար օրենքով առկա չի եղել նախապես իրազեկման պահանջ, իսկ գործի քննության շրջանակներում որևէ կերպ չի ապացուցվել հրապարակային միջոցառման զանգվածային լինելու փաստը: Դատարանի կողմից գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը բազմակողմանի լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ որոշված չի եղել:

18. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճռի[11] ուսումնասիրությամբ վերհանված խախտմամբ մեկ այլ կարգապահական վարույթը հարուցելու հիմք է հանդիսացել այն, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճռով հաստատվել է, որ դատավորի վարքագծի արդյունքում դիմումատուին պատճառվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքի խախտում: Մասնավորապես, Դատավորը իր վարույթում քննվող գործերից մեկով հրաժարվել է առողջական խնդիրներ ունեցող դիմումատուի

[10] ՄԻԵԴ, Բարսեղյանն ընդդեմ Հայաստանի, https://hudoc.echr.coe.int/rus?i=001-211814
[11] ՄԻԵԴ, Ջհանգիրյանն ընդդեմ Հայաստանի, https://www.echr.am/resources/echr//judgments/fddd1b2cb549a473ec47495293d69b15.pdf

բացակայությամբ քննել նրա խափանման միջոցը վերացնելու հարցը: Չնայած նույնը օրը դիմումատուին ի վերջո տեղափոխել են Դատարան, և Դատավորը հրաժարվել է քննարկել միջնորդությունը՝ չնայած հետաձգել էր նիստը մինչև Դիմումատուի ներկայությունն ապահովելը, և անցել է դատական քննության: ՄԻԵԴ-ը գնահատել է, որ նշված դեպքերը դիմումատուին պատճառել են ոչ միայն ֆիզիկական ցավ, այլև հուզական տառապանք: Ըստ վարույթը հարուցած մարմնի՝ Դատարանը պարտավոր էր քննարկել միջնորդությունը և պատճառաբանված որոշում կայացներ, ուստի խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի պահանջը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հարուցված միակ վարույթի հիմքը հանդիսացել է դատավորի հայտարարագրի վերլուծության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունը:[12]

Բարձրագույն դատական խորհրդի անդամների հանձնախմբի կողմից ԲԴԽ լիազորությունները կասեցրած նախագահի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի հիմք է հանդիսացել լրատվական միջոցին տրված հարցազրույցի ընթացքում դատական իշխանությունը հեղինակազրկող արտահայտություններով վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումը: Ըստ վարույթը հարուցող հանձնախմբի՝ առկա են հիմնավոր կասկածներ, որ դատավորը կարծիք է հայտնել ՍԴ որոշման մասին առանց դրա ամբողջական տեքստը կարդալու, և դատավորի արտահայտությունները հնարավոր է, որ իրենից ներկայացնում են դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագծի առերևույթ դրսևորում, հրապարակայնորեն կասկածի տակ են առնում դատարանի գործողությունները, դատական ակտերը և այլն:

Կարգապահական վարույթ հարուցելու ժամկետները

ՀՀ Դատական օրենսգրքի 144-րդ հոդվածով նախատեսվում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու ժամկետները: Ըստ հոդվածի 1-ին մասի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի

[12] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-79-Ո-Կ-19 վարույթով նիստ նշանակելու մասին որոշում, https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/xcrovyY1IltAqhbYAngX7rQgzHgViCpHwN0Q5jgx.pdf

նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է ութ տարի.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց մեկ տարի հետո, բացառությամբ օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտումների.

3) դատավորի կողմից սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց երեք տարի հետո:

Ուսումնասիրված վարույթների մեծ մասը՝ այն է թվով 16 կարգապահական վարույթ, հարուցվել է դատավարական նորմի խախտման հիմքով՝ համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո՝ 1 տարվա ժամկետում: Նույն վարույթների մեջ երկու դեպքում հարուցման հիմք հանդիսացել է նաև նյութական նորմի խախտումը:

4 դեպքում հարուցվել է վարքագծի կանոնների խախտման հիմքով՝ այն հայտնաբերելուց հետո՝ 3 ամսյա ժամկետում: Մեկ գործի շրջանակներում մեկից ավելի վարքագծի խախտումների պայմաններում և՛ երկու վարույթ հարուցվել է վարքագծի կանոնի խախտման հիմքով՝ այն հայտնաբերելուց հետո մեկ տարվա ժամկետում: 3 վարույթ հարուցվել է Արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Ուսումնասիրված գործերով արձանագրվել են դեպքեր, երբ դատավորի կողմից բարձրացվել է վարույթ հարուցելու ժամկետը բաց թողնելու հիմքով վարույթի կարճման հարցը: Խորհուրդը նման դեպքում ներկայացրել է հիմնավորում, որ Դատավորի կողմից թույլ տրված դատավարական նորմի խախտումն ավարտվել է դատական ակտը համակարգում հրապարակելու օրը և դրան հաջորդող ժամանակահատվածում, Արդարադատության նախարարի կողմից վարույթի հարուցմամբ չի խախտվել վարույթ հարուցելու մեկամյա ժամկետը[13]

[13] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-105-Ո-Կ-25 որոշում:

Ուսումնասիրված բոլոր գործերով վարույթ հարուցող մարմինները պահպանել են օրենսգրքով վարույթի հարուցման նախատեսված ժամկետները:

2. ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

2022թ. ընթացքում ուսումնասիրված բոլոր գործերով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունների քննությունը Բարձրագույն դատական խորհրդում եղել է հրապարակային, բոլոր գործերով վարույթի ընթացքի վերաբերյալ տեսագրությունը հանրայնացվել է նաև ԲԴԽ ինտերնետային հարթակներում[14]:

Երկու գործով ի լրումն ԲԴԽ կողմից հեռարձակման, վարույթներին ներկա են գտնվել նաև առանձին լրատվամիջոցներ:

Անհրաժեշտ է նշել, որ ԲԴԽ վերջնական որոշումներից ոչ բոլորն են հրապարակվել: Երկու վարույթներով ԲԴԽ վերջնական որոշումները չեն հրապարակվել դատական իշխանության պաշտոնական կայքի համապատասխան բաժնում: Դրանցից մեկը վերաբերում էր վարույթի կարճմանը՝ հիմքում դնելով դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալը, և մյուսը՝ վարույթն առանց քննության թողնելուն՝ ԲԴԽ կազմում քվորում չլինելու հիմքով:

Առանց քննության թողնելու որոշման վերաբերյալ կազմակերպության կողմից հարցում է իրականացվել Դատական դեպարտամենտ հասանելի դարձնելու նշված որոշումը, սակայն ի պատասխան հարցմանը նշվել է, որ ԲԴԽ-80-Ո-Կ-20 կարգապահական վարույթով դատական նիստի ընթացքում հրապարակվել է առանց քննության թողնելու մասին արձանագրային որոշում՝ ԲԴԽ քվորում չլինելու պատճառով[15]:

Դատավորի մասնակցությունը Բարձրագույն դատական խորհրդում գործի քննությանը

Ուսումնասիրված 24 վարույթներից 22-ի դեպքում բոլոր դատավորները անձամբ մասնակցել են Բարձրագույն դատական խորհրդում կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության քննությանը: Մեկ վարույթը, որի ընթացքում դատավորը չի մասնակցել նիստերին, հետագայում կարճվել է, դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով: Մեկ այլ

[14] Բարձրագույն դատական խորհուրդ, Յութուբյան էջ, https://www.youtube.com/@user-bd4zx2wt4w
[15] Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտ, գրություն N ԴԴ-4 Ե-10141, 07 դեկտեմբեր 2022թ. :

վարույթով նիստին մասնակցություն չի ունեցել ԲԴԽ լիազորությունները կասեցված նախագահը: Դատավորներից մեկը մասնակցել է միայն եզրափակիչ ելույթին:

Ուսումնասիրված գործերից 9-ով դատավորներն ունեցել են նաև ներկայացուցիչներ: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական կազմի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում ներկայացուցիչ ունեցել է դատական կազմի դատավորներից մեկը:

ԲԴԽ լիազորությունները կասեցրած նախագահի կարգապահական վարույթի քննության նիստը ԲԴԽ-ում տեղի է ունեցել իր և ներկայացուցչի բացակայությամբ: Համաձայն ԲԴԽ որոշմամբ տրված հիմնավորման՝ ըստ գործի փաստերի դատավոր անդամի ներկայացուցչի կողմից ներկայացված է եղել միջնորդություն գործի քննությունը հետաձգելու մասին, քանի որ նույն օրը նույն ժամին փաստաբանը այլ դատարանում մեկ այլ նիստի պետք է մասնակցի, որը նշանակված է եղել այս կարգապահական գործի քննությունից առաջ: ԲԴԽ-ն արձանագրել է, որ միջնորդությունը ներկայացված է եղել միայն ներկայացուցչի կողմից, իսկ ԲԴԽ դատավոր անդամը գործի քննությունը հետաձգելու միջնորդություն չի ներկայացրել ոչ մինչև նիստը, ոչ էլ նիստի ընթացքում, ինչը նա կարող էր անել ցանկացած հասանելի միջոցով: Փաստաբանի կողմից ավելի ուշ միջնորդությանը կից ներկայացված «Շտապօգնություն» ՓԲԸ կողմից տրամադրված տեղեկանքը չի կարող բավարար հիմք հանդիսանալ ԲԴԽ դատավոր անդամի բացակայությունն առողջական խնդիրներով պայմանավորված հիմնավոր համարելու համար, քանի որ ըստ տեղեկանքի շտապօգնության կանչը տեղի է ունեցել 16. 06. 2022թ-ին ժամը 18:16-ին Խորհրդի նիստի ավարտից հետո և Խորհուրդը որևէ կերպ այդ կանչի մասին իմանալ կամ դրանով պայմանավորված նիստը հետաձգելու հնարավորություն չի ունեցել: Ավելին, ըստ ԲԴԽ-ի՝ ԲԴԽ լիազորությունները կասեցրած նախագահը նիստի տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցված է եղել, սակայն նրա կողմից ԲԴԽ-ին՝ նիստը հետաձգելու մասին միջնորդություն չներկայացնելը, ինչպես նաև որևէ կերպ իր ներկայացուցչի ներկայացրած միջնորդությանը չմիանալն իրենցից ներկայացնում են դատավոր անդամի կողմից նիստին անձամբ մասնակցելու, այն է՝ լսվելու իրավունքից, հրաժարում (waiver of a right) գործողության միջոցով: Խորհուրդը քննարկել է նաև այն պայմանները, որոնց առկայությամբ կարելի է համարել, որ անձը հրաժարվել է իր դատավարական, մասնավորապես՝ կոնվենցիոն իրավունքներից, ինչպես որ այդ պայմանները մեկնաբանված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից[16]:

Դատավորների դիրքորոշումները վերագրվող խախտման վերաբերյալ

Ուսումնասիրված վարույթներից մեկով մասնակից դատավորը չի վիճարկել խախտումը: Դատավորն ընդունել է խախտման հանգամանքը և նշել, որ այն բացառապես անուշադրության հետևանք է: Այդ գործով դատավորը,

[16] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-58-Ո-Կ-11 որոշում:

մասնավորապես, մեղադրյալին կալանավորելու թույլտվություն է տվել մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարքների վաղեմության ժամկետներն անցած լինելու պայմաններում՝ խախտելով վերջինիս իրավունքները:

Խորհուրդը մեկնաբանել է, որ դատավորը, ըստ էության, անուշադրության է մատնել իր ձևավորած դիրքորոշման արդյունքում պարտադիր առաջ եկող հետևանքները, մասնավորապես՝ վաղեմության ժամկետը լրացած ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածով առաջադրված մեղադրանքով անձի կալանավորման անհնարինությունը: Դատավորի կողմից խախտումը կատարվել է դիտավորության բացակայության պայմաններում: Միաժամանակ, դատավորը դրսևորել է կոպիտ անփութություն, քանի որ պարտավոր էր և կարող էր գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը[17]: Խորհուրդը որոշել է դատավորին հայտարարել նկատողություն:

Անհրաժեշտ է ընդգծել դատավարական ժամկետների խախտման հիմքով հարուցված վարույթներից երկուսով դատավորների ներկայացրած դիրքորոշումները, որոնցով հիմնականում մատնանշելով գերծանրաբեռնվածությունը՝ դատավորները ընդունել են ֆորմալ խախտման առկայությունը, սակայն վիճարկել գործունեության այդ պայմաններում դատավարական ժամկետները չպահպանելը խախտում հանդիսանալու հանգամանքը:

Մնացած վարույթներով դատավորների կողմից վերագրվող խախտման փաստը վիճարկվել է:

Այսպես, վարույթներից մեկով Դատավորը նշել է, որ վերագրվող արարքը չի գտնվում դատավորի իրավասության տիրույթում, այն կատարում է դատարանի նախագահը, դատավորի՝ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում գործի վերաբաշխման պարտադիրությունը սահմանված է ՀՀ դատական օրենսգրքով, ինչի կապակցությամբ վկայակոչվել է Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը: Ավելին, ըստ Դատավորի՝ դատավորի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում գործերի վերաբաշխումը համընդհանուր պրակտիկա է: Դատավորը պնդել է, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթ հանդիսացած զեկուցագիրը եղել է կամայական և իրականացվել է խտրական ձևով[18]:

Մեկ այլ վարույթով Դատավորը իր բացատրությամբ անդրադարձել է իրավական որոշակիությանը, ներկայացրել մի շարք միջնորդություններ կապված իրավական որոշակիությանը, ինչպես նաև ներկայացրել է, որ վարույթ հարուցելու մասին որոշման մեջ ներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում օբյեկտիվ իրականությանը[19]: Անդրադառնալով վարույթի հարուցման իրական պատճառներին՝

[17] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-23-Ո-Կ-5 որոշում:
[18] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ -2-Ո-Կ-1 որոշում:
[19] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-24-Ո-Կ-6 որոշում:

Դատավորի ներկայացուցիչը ի հավելումն հայտնել է, որ այն հիմնական հարցը, թե արդյոք Դատավորը վիրավորել է ոստիկանին, թե ոչ, կրում է վարչաիրավական բնույթ և բացահայտման է ենթակա վարչական դատավարության կարգով:

Հաջորդ գործով դատավորը վիճարկել է խախտման փաստը այն հիմնավորմամբ, որ դատական նիստերում քննվելիք բոլոր բողոքների քննությունը գրավոր ընթացակարգով քննելու որոշումները կայացվել են բացառապես կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված: Տվյալ գործով Վերաքննիչ դատարանը իր նախաձեռնությամբ որոշում է կայացրել բողոքի քննության գրավոր ընթացակարգի անցնելու, և նման որոշման կայացումը պայմանավորված է եղել որոշակի այնպիսի հանգամանքների հավասարակշռմամբ, որի արդյունքում վերացել է այդ նպատակահարմարությունը և ինչի վերաբերյալ ներկայացվել է համապատասխան պատճառաբանություն[20]:

Ուսումնասիրված հաջորդ գործով դատական վճիռը հրապարակվել է ոչ թե նախագահող դատավորի, այլ դատական կազմի մեկ այլ դատավորի կողմից: Դատավորը նշել է, որ գործով վարույթը ենթակա է կարճման, քանի որ ինքը վարակված է եղել կորոնավիրուսով և ընտրական գործերով քննությունը օրենսդրությամբ 7 աշխատանքային օր է սահմանված, վերջինս մասնակցել է գործի ամբողջ ընթացքին, և ղեկավարել այն, մասնակցել խորհրդակցական սենյակում որոշման կայացմանը, սակայն վերջնական դատական ակտը չի ընթերցել, այլ ընթերցել է մեկ այլ դատավոր, քանի որ նախագահող դատավորը հիվանդ է եղել[21]:

Առանձին դեպքերում դատավորը դատական նիստին նշել է իր վերաբերյալ հարուցված վարույթի ապօրինի լինելու վերաբերյալ, այլ բացատրություն չի ներկայացվել[22]:

Դատավարական ժամկետները չպահպանելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների առնչությամբ դատավորների ներկայացված դիրքորոշումները հանգում են հետևյալին.

Վարույթներից մեկի առնչությամբ դատավորը նշել է, որ չի վիճարկել իր կողմից թվով 35 քաղաքացիական գործերով դատավարական ժամկետները չպահպանելու և դրա արդյունքում հայցվորի՝ հայցադիմումները վարույթ ընդունելու հարցը լուծելու կապակցությամբ ընդունված համապատասխան որոշումները օրենքով սահմանված ժամկետում ստանալու իրավունքի խախտման փաստը: Սակայն դատավորը նշել է, որ ինքը և իր աշխատակազմը չեն ունեցել օբյեկտիվ հնարավորություն նշված խախտումը թույլ չտալու համար, որպիսի պարագայում դատավարական ժամկետների խախտումները կատարվել են մեղքի բացակայությամբ: Որպես նշված դիրքորոշման հիմնավորում դատավորը ներկայացրել է իր և աշխատակազմի

[20] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-7-Ո-Կ-3 որոշում:
[21] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-4 որոշում:
[22] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-61-Ո-Կ-12 որոշում:

գործունեության վրա ազդող ընդհանուր և հատուկ գործոնները՝ նշելով դատարանի գերծանրաբեռնվածությունը, ժամկետի պահպանման և դատական ակտի որակի ապահովման բախումը՝ պայմանավորած դատարանի գերծանրաբեռնվածությամբ, վերադարձման որոշումների հետ կապված խնդիրները և այլն[23]:

Մեկ այլ գործով ևս Դատավորը դատական նիստի ընթացքում ընդունել է դատավարական ժամկետների խախտումների փաստը, սակայն նշել է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում պաշտոնավարող դատավորը ծանրաբեռնված է առնվազն թույլատրելիից եռակի անգամ ավելին: Նման պայմաններում գործունեության արդյունքում ստացված պրոդուկտը վկայում է այն մասին, որ անկողմնակալ դիտորդի տեսանկյունից բացակայում է ժամկետների պահպանման նկատմամբ իր անտարբերության, դատավարության մասնակիցներից որևէ մեկի նկատմամբ կողմնակալության տպավորության հնարավորությունը: Դատավորը միջնորդել էր Խորհրդին իրականացնել դատահոգեբանական փորձաքննություն՝ պարզելու դատավորի ծանրաբեռնվածության հետևանքները իր և իր գործունեության վրա[24]:

Մեկ այլ գործով դատավորը նշել է, որ խնդրո առարկա քաղաքացիական գործով որոշումը կայացվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետում, որից հետո որոշումը հանձնվել է օգնականին՝ հետագա գործողությունները կատարելու համար: Դատավորի գործառույթների մեջ ուղղակի չի մտնում առաքանի ուղարկելը, դատավարական փաստաթղթեր հանձնելը, ինչպես նաև դատական տեղեկատվական համակարգում դատական ակտի ներբեռնելը, այլ այդ ծառայողական պարտականությունները վերապահված են դատավորի աշխատակազմի՝ համապատասխան դատական ծառայողին: Դատավորը նաև անդրադարձել է նիստ նշանակելու ժամկետներին առ այն որ հայցը վարույթ ընդունելուց հետո մեկ ամսվա ընթացքում է նիստ հրավիրվել, այդ նիստը չի կայացել, քանի որ վերջինս գտնվել է ժամանակավոր անաշխատունակության մեջ, որից հետո ներկայացվել է այլ ամսաթվերին դատական նիստերի նշանակման վերաբերյալ տեղեկություն[25]:

Մի շարք գործերով դատավորների կողմից ներկայացված վիճարկումը վերաբերել է օրենքի մեկնաբանությանն ու, ըստ այդմ, խախտման բացակայությանը: Օրինակ, մեկ գործով դատավորը վարույթ հարուցած մարմնին ներկայացրել է բացատրություն և միջնորդել կարճել ներկայացված կարգապահական վարույթը: Դատավորի կողմից վճռում ներկայացված հիմնավորումներն ու պատճառաբանությունները հիմնավոր են համարվել թե Վերաքննիչ, թե Վճռաբեկ դատարանների կողմից: Դատական պրակտիկան զարգացել է այն տրամաբանությամբ, որ հուղարկավորության հետ

[23] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-72-Ո-Կ-17 որոշում:
[24] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-116-Ո -Կ -27 որոշում:
[25] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-49-Ո-Կ-10 որոշում:

կապված ծախսերի չափը սահմանվում է որոշակի հաստատուն գումարով՝ անկախ այդ չափով վճարում կատարելու փաստը հաստատող ապացույցի առկայությունից[26]:

Դատավորների ներկայացրած բացատրությունները, առարկություններն ու միջնորդությունները

Կարգապահական վարույթների ընթացքում դատավորների ընթացակարգային իրավունքների ապահովման տեսանկյունից բոլոր դատավորները հնարավորություն են ունեցել ներկայացնել նաև առարկություններ և միջնորդություններ, հարցեր տալ ելույթ ունեցողին և ներկայացնել ապացույցներ:

Մասնավորապես, ուսումնասիրված 24 գործերից 20-ի դեպքում դատավորները ներկայացրել են առարկություններ Խորհրդին:

Մյուս չորս գործերով առկա է հետևյալ պատկերը.

- Վարույթներից մեկով դատավորը ընդունել է խախտումը,
- Մեկ այլ վարույթով դատավորը նշել է, որ պատասխան է ներկայացվել Խորհրդին և Լիազոր Մարմնին, և ավելացնելու այլ բան չկա,
- Դատավորներից մյուսը չի ներկայացրել առարկություն, քանի որ վարույթը կարճվել է դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով և նիստեր տեղի չեն ունեցել,
- Վերջին դեպքում ԲԴԽ դատավոր անդամը չի մասնակցել նիստին, փաստաբանի կողմից ներկայացվել է նիստը հետաձգելու միջնորդությունը, ինչը սակայն մերժվել է:

Ուսումնասիրված բոլոր 24 վարույթներով, բացառությամբ մեկի, դատավորները ներկայացրել են նաև միջնորդություններ:

Չորս գործերով դատավորների կողմից առանձին միջնորդություն է ներկայացվել հարուցված վարույթը կարճելու վերաբերյալ, երկու դեպքում դատավորների կողմից միջնորդություն է ներկայացվել Խորհրդի առանձին անդամներին բացարկ հայտնելու վերաբերյալ:

Մեկ վարույթի ընթացքում միջնորդություն ներկայացվել է և վարույթ հարուցած լիազոր մարմնի և վարույթին մասնակից դատավորի կողմից: Լիազոր մարմնի կողմից միջնորդության ներկայացումը կապված է եղել դատավորի կողմից պետական սահմանը հատելու առնչությամբ լրացուցիչ տվյալներ ստանալու անհրաժեշտությամբ, ինչը քննարկվել է նիստի ընթացքում, և միջնորդությանը անդրադարձվել է վերջնական որոշմամբ: Նույն գործով Լիազոր մարմինը ևս մեկ միջնորդություն է ներկայացրել, որով խնդրել է ստանալ դատավորի արձակուրդի հրամանը և տարեկան ժամանակացույցի պատճենները, ինչը մերժվել է: Մեկ այլ միջնորդությամբ Լիազոր մարմինը խնդրեց ստանալ 2021 թվականի ընթացքում

[26] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ- 43-Ո-Կ-9 որոշում:

վերաքննիչ քրեական դատարանի դատավորների կողմից արձակուրդ մեկնելու հիմքով գործեր վերամակագրության հանձնելու վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները՝ ըստ յուրաքանչյուր դատավորի մակագրված դատական գործի: Լիազոր մարմնի այդ միջնորդությունը բավարարվել է:

Դատավորի ներկայացուցիչները իրենց հերթին միջնորդություն են ներկայացրել ուսումնասիրել զեկուցագրի հիմքերը, ինչը բավարարվել է, մեկ այլ միջնորդությամբ Դատավորը միջնորդել է ուսումնասիրել յուրաքանչյուր դատավորի արձակուրդում գտնվելու օրերի քանակը, տևողությունը, ինչը ներառվել է Լիազոր մարմնի կողմից ներկայացված վերջին միջնորդության մեջ: Այսինքն, մեկ գործով կողմերի կողմից ներկայացված են եղել 5 միջնորդություններ:[27]

Մեկ այլ գործով դատավորի ներկայացուցիչների կողմից ներկայացված երկու միջնորդությունն էլ մերժվել է: Ներկայացված միջնորդություններից մեկը բնույթով տարբերվել է մինչ այդ տարբեր վարույթներով ներկայացված միջնորդություններից: Մասնավորապես, Դատավորի կողմից ներկայացվել է դատահոգեբանական փորձաքննություն իրականացնելու միջնորդություն, ինչը թույլ կտար պարզել, թե արդյոք դատավորի ծանրաբեռնվածությունը հետևանք է ունեցել վերջինիս վրա, եթե այո, ապա ինչպիսին, և նման պայմաններում ով է պատասխանատու այդ ծանրաբեռնվածության համար: Ներկայացված միջնորդության առնչությամբ Խորհրդի նախագահը, նախ, հարց է ուղղել կողմին, արդյոք այդ տեղեկությունը հնարավոր չէ ստանալ հարց ու պատասխանի միջոցով, ինչին ի պատասխան ներկայացվել է, որ հարց ու պատասխանի միջոցով ստացված տեղեկությունը չի կարող ազդել կողմի դիրքորոշման վրա: Նմանատիպ հարցեր դատավորի ներկայացուցիչներին ներկայացվել են Խորհրդի այլ անդամների կողմից ևս, ինչից հետո Խորհուրդը միջնորդությունը մերժել է այն հիմնավորմամբ, որ հանգամանքները, որոնք ներկայացվել են Դատավորի կողմից հիմնավոր չեն եղել միջնորդությունը բավարարելու համար: Այլ հիմնավորում միջնորդությունը մերժելու առնչությամբ չի ներկայացվել[28]:

Նմանատիպ իրավիճակներում Խորհրդի կողմից միջնորդությունների մերժումը պահանջում է սպառիչ հիմնավորման ներկայացում առանձին արձանագրային որոշմամբ, քանի որ միջնորդությամբ պահանջված փորձաքննության կամ այլ նմանատիպ գործողություններով ստացվող տեղեկությունները կարող են ազդեցություն ունենալ դատավորի դիրքորոշման փաստարկման և վերջնական որոշման վրա:

[27] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-2-Ո-Կ-1 որոշում:
[28] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-116-Ո -Կ -27 որոշում:

Մեկ այլ վարույթով Դատավորը նիստի ընթացքում միջնորդել է նիստն անցկացնել դռնփակ, սակայն դռնփակության կոնկրետ հիմքեր չի մատնանշել: Դատավորի ներկայացված միջնորդությունը Խորհրդի կողմից մերժվել է[29]:

Բացատրության և ապացույցների ներկայացում

Ուսումնասիրված 24 վարույթներից 21-ի պարագայում դատավորները ներկայացրել են գրավոր բացատրություն: Մեկ դեպքում դատավորը ընդունել է խախտումը, երկու դեպքում չի իրացվել այդ իրավունքը:

Ներկայացված բացատրությունները վարույթին օգտագործվել են նաև որպես ապացույց: Որպես ապացույց բոլոր վարույթներին օգտագործվել են նաև գործի նյութերը:

Մեկ գործով որպես ապացույց է օգտագործվել նաև դատական նիստի ձայնագրության լազերային սկավառակը:

Մեկ այլ գործով վարույթին որպես ապացույց օգտագործվել է նաև հաղորդում ներկայացրած անձից՝ ՀՀ ոստիկանությունից ստացված նյութերը:

Խորհրդում քննվող վարույթի ընթացքում վարույթ հարուցած մարմնի կողմից ներկայացված ապացույցները հիմնականում եղել են տարբեր մարմիններից պահանջված փաստաթղթերի և միջնորդությունների տեսքով:

Ուսումնասիրված վարույթներից 12-ի դեպքում դատավորները նիստի ընթացքում հանդես են եկել հարցերով ելույթ ունեցողներին, 8 վարույթով հարցեր չեն հնչել: Մեկ դեպքում հարցերի փուլ չի կայացել, քանի որ դատավորը ընդունել է խախտումը[30]:

Փաստաբանի վարձատրության փոխհատուցման դիմումների քննարկում

Հատկանշական է, որ ուսումնասիրված վարույթներից երկուսով վարույթին մասնակից դատավորի կողմից կարգապահական պատասխանատվության չենթարկվելու դեպքում ներկայացվել է դիմում փաստաբանի խելամիտ վարձատրության փոխհատուցում ստանալու համար, ինչը երկու դեպքում էլ Խորհրդի կողմից մերժվել է: Խորհուրդը նշել է, որ դատավորի կողմից ներկայացված փաստաբանի հետ կնքված վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրում բացակայում է պայմանագրի գինը, ինչի պարագայում Խորհուրդը դրա խելամտության չափը որոշելու ելակետային տվյալ չունի, ուստի ներկայացված միջնորդությունը՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի հատուցման մասին, ենթակա է մերժման:

Մյուս գործով Խորհուրդը արձանագրել է, որ Դատավորի կողմից հանձնարարության պայմանագիրը ներկայացվել է վարույթի նյութերի

[29] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-35-Ո-Կ-7 որոշում:
[30] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-23-Ո-Կ-5 որոշում:

հետազոտումից և կողմերի ամփոփիչ ելույթներից հետո, որպիսի պայմաններում այն քննարկման առարկա դարձվել չի կարող:

Կարգապահական վարույթի տևողությունը

Դատական օրենսգրքի 150-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից եռամսյա ժամկետում[31]:

Բացառիկ դեպքերում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ժամկետը Բարձրագույն դատական խորհրդի հիմնավորված որոշմամբ կարող է ոչ ավելի, քան երեք ամսով երկարաձգվել, իսկ փորձաքննություն նշանակվելու դեպքում՝ փորձաքննության կատարման համար անհրաժեշտ ժամկետով[32]:

Ուսումնասիրված գրեթե բոլոր վարույթներով Խորհրդում վարույթի տևողության Օրենսգրքով սահմանված ժամկետները պահպանված են եղել, բացառությամբ մեկ վարույթի, որն էլ թողնվել է առանց քննության՝ օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու հիմքով:

Բոլոր գործերով նիստերի ընդհանուր քանակը եղել է 81, ներառյալ դատական ակտի հրապարակման նիստը:

Ընդ որում, գործի քննության առաջին նիստի և դատական ակտը հրապարակելու նիստերի միջև ժամանակահատվածը, ըստ ուսումնասիրության արդյունքների կազմել է հետևյալ պատկերը. 11 վարույթով մինչև մեկ ամիս տևողություն, 11 վարույթով մեկից երկու ամիս:

Երկու վարույթներով կարգապահական վարույթի քննությունը տևել է երկուսից երեք ամիս, ընդ որում՝ մի դեպքում վարույթը կարճվել է դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով, մյուսով՝ թողնվել է առանց քննության՝ Խորհրդում քննության համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետը լրացած լինելու հիմքով:

Այսպես գործերից մեկով, որով կարգապահական վարույթ էր հարուցված Վերաքննիչ վարչական դատարանի դատավորի նկատմամբ, նիստ նշանակված էր 2022թ. օգոստոսի 22-ին, որը չէր կայացել և հաջորդ դատական նիստը նշանակվել է 2022թ. հոկտեմբերի 17-ին: Հոկտեմբերի 27-ի որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով: Այսինքն, Խորհրդի կողմից տվյալ գործով որևէ ջանասիրություն չի դրսևորվել վարույթն

[31] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 150, 1-ին մաս:
[32] Նույն տեղում, 2-րդ մաս:

իրականացնել առավել սեղմ ժամկետներում և կարգապահական վարույթով կայացնել բովանդակային՝ ենթադրյալ խախտմանն իրավական գնահատական տվող դատական ակտ, այդ թվում՝ հնարավոր պատասխանատվության միջոցի կիրառմամբ:

Մեկ այլ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի ուսումնասիրության հիման վրա հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում Արդարադատության նախարարի միջնորդությունը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, թողնվել է առանց քննության՝ Խորհրդում հարցի քննության օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու հիմքով: Մասնավորապես, ըստ Խորհրդի որոշման՝ Դատավորի կողմից ներկայացվել է միջնորդություն, որ 2022թ. օգոստոսի 12-ից սեկտեմբերի 5-ը գտնվելու է արձակուրդում և բացակայելու է Երևանից, իսկ հաջորդող օրերին ունենալու է աշխատանքային խիստ ծանրաբեռնվածություն և խնդրել է իր վերաբերյալ ներկայացրած միջնորդության քննարկումը նշանակել հոկտեմբեր ամսից ոչ շուտ: 2022թ. օգոստոսի 25-ին նշանակված դատական նիստը չի կայացել Դատավորի արձակուրդում գտնվելու պատճառով: Հաջորդ դատական նիստը նշանակվել է 2022թ. սեկտեմբերի 22-ին, որի ընթացքում Դատավորի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություն և խորհուրդը հեռացել է խորհրդակցական սենյակ որոշում կայացնելու: Հերթական դատական նիստը նշանակվել է 2022թ. հոկտեմբերի 13-ին, որը չի կայացել Խորհրդի քվորում չունենալու պատճառով: Հաջորդ դատական նիստը նշանակվել է 2022թ. հոկտեմբերի 27-ին, որին Դատավորի ներկայացուցչի կողմից ներկայացվել է դիմում՝ նիստը հետաձգելու վերաբերյալ՝ Դատավորի վատառողջ լինելու հիմնավորմամբ: Հաջորդ նիստը նշանակվել է 2022թ. նոյեմբերի 3-ին, որի ժամանակ արդեն լրացած է եղել Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության եռամսյա ժամկետը: Ըստ Խորհդրի՝ քննության ժամկետը երկարաձգելու համար Օրենսգրքի 90-րդ, 94-րդ, 150-րդ հոդվածներով նախատեսված վավերապայմաններն առկա չեն, ինչն էլ հիմք է միջնորդությունն առանց քննության թողնելու համար՝ Խորհրդում հարցի քննության օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու հիմքով[33]: Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ Խորհրդի կողմից սույն գործով նիստերի նշանակման ինտերվալների և ժամկետների պահպանման հետևողականություն, ըստ էության, չի դրսևորել:

[33] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-80-Ո-Կ-21 որոշում:

3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրված 24 կարգապահական վարույթների քննության արդյունքում Խորհրդի կողմից 11-ով կայացվել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում, այդ թվում՝ ԲԴԽ լիազորությունները կասեցված նախագահի նկատմամբ: 9 գործով միջնորդությունը մերժվել է, երկու գործով կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործով վարույթը կարճվել է, երկու վարույթով միջնորդությունը թողնվել է առանց քննության:

2022թ.-ին Բարձրագույն դատական խորհրդի կողմից քննված վարույթները՝ ըստ արդյունքների



Ընդ որում, ըստ վարույթ հարուցած մարմինների առկա է հետևյալ պատկերը՝

Արդարադատության նախարարի կողմից հարուցված 18 վարույթներով ներկայացված միջնոդրություններից 9-ը բավարարվել են, 7-ը մերժվել և 2 վարույթ՝ թողնվել է առանց քննության:

Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից հարուցված 4 կարգապահական վարույթներով միջնորդություններից մեկը բավարարվել է Խորհրդի կողմից, 2 միջնորդություն մերժվել է, մեկ միջնորդության քննության վարույթը կարճվել է:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված մեկ միջնորդության քննության վարույթը կարճվել է:

Խորհրդի հանձնախմբի կողմից հարուցված կարգապահական վարույթով միջնորդությունը բավարարվել է:

Աղյուսակ 3. Վարույթի արդյունքը՝ ըստ վարույթ հարուցող մարմնի:

Վարույթը հարուցած մարմին	**Բավարարված**	**Մերժված**	**Կարճված**	**Առանց քննության թողնված**
Արդարադատության նախարար	9	7	0	2
Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողով	1	2	1	0
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	0	0	1	0
Հանձնախումբ	1	0	0	0

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումներից 3-ով Խորհուրդը խախտումը որակել է որպես դատավարական իրավունքի նորմի խախտում, ինչը հանգեցրել է դատական իշխանության հեղինակազրկմանը:

5 գործով դատավորի արարք ԲԴԽ կողմից որակվել է որպես դատավարական իրավունքի նորմի, ինչպես նաև վարքագծի կանոնի խախտում, ընդ որում՝ մեկ գործով խախտումը որակվել է որպես էական կարգապահական խախտում:

Երկու գործով դատավորի արարքը որակվել է որպես վարքագծի կանոնի խախտում, որոնք ԲԴԽ կողմից գնահատվել են որպես էական կարգապահական խախտում:

Մեկ գործով ԲԴԽ կողմից դատավորի խախտմանը որակում չի տրվել: Դատավորի կողմից խախտում է արձանագրվել այն հիմքով, որ վերջինս մեղադրյալին կալանավորելու վերաբերյալ որոշում է կայացրել այն պայմաններում, երբ անցել է ենթադրյալ հանցագործության վաղեմության ժամկետը: Ըստ Խորհրդի՝ Դատավորն անուշադրության է մատնել վաղեմության ժամկետը լրացած ՀՀ քրեական օրենսգրքի

հոդվածով առաջադրված մեղադրանքով անձի կալանավորման անհնարինությունը[34]:

Աղյուսակ 4. Խորհրդի որոշմամբ արձանագրված խախտումները

Կարգապահական պատասխանատվության հիմք	**Գործերի քանակը**
Դատավարական իրավունքի նորմի խախտում	3
Դատավարական իրավունքի նորմի խախտում, որը հանգեցրել է նաև դատավորի վարքագծի կանոնի խախտման	5
Վարքագծի կանոնի խախտում	2

Անդրադառնալով Խորհրդի կողմից խախտման բնույթի մեկնաբանություններին, պետք է նշել, որ 19 վարույթով Խորհրդի կողմից որոշման մեկնաբանությունների հիմքում դրվել է ՀՀ Սահմանադրությունը:

Դիտարկված բոլոր գործերով Խորհրդի կողմից խախտման բնույթի հիմքում դրվել է ՀՀ դատական օրենսգիրքը, ինչպես նաև առանձին վերաբերելի օրենսդրական կարգավորումներ:

5 գործով մեկնաբանությունների մեջ կիրառվել են նաև Սահմանադրական դատարանի որոշումները, 8 գործով՝ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները Խորհրդի կողմից հիշատակվել են 9 վարույթով կայացված որոշումներում: Խորհրդի կողմից հիմնականում օգտագործվել են արդար դատաքննության իրավունքի և կալանքի վերաբերյալ ընդունված դատական ակտերով տրված մեկնաբանությունները:

Ուսումնասիրված գործերի մեծ մասով Խորհուրդը հղում է կատարել նաև իր իսկ կողմից նախկինում քննարկված նմանատիպ հարցերին և ընդունված որոշումներին:

3. 1. Կարգապահական խախտում արձանագրող որոշումների ու տույժի տեսակի հիմնավորումները

Դատավորների նկատմամբ կիրառված տույժի տեսակները

2022թ. ԲԴԽ կողմից դատավորների նկատմամբ կիրառվել են հետևյալ կարգապահական տույժի տեսակները. երկու դատավորի նկատմամբ կիրառվել է նախազգուշացում, 4 դատավորի նկատմամբ նկատողություն, 2 դատավորի

[34] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-23-Ո-Կ-5 որոշում:

նկատմամբ խիստ նկատողություն կարգապահական տույժը, և 3 դատավորի լիազորություններ դադարեցվել են:



ԲԴԽ որոշումների հիմնավորումները.

Գործերից մեկով քննարկելով վարքագծի կանոնի խախտման հարցը՝ Խորհուրդը գտել է, որ Դատավորի պատճառաբանությունների և կարգապահական վարույթի առնչությամբ տրված բացատրնվության վերլուծությունից բխում է, որ օրենքով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս Դատավորը վարքագծի կանոնների խախտումները թույլ է տվել դիտավորությամբ, ինչը հիմք է հանդիսանում վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Մասնավորապես, քննարկված գործով Դատավորի կողմից դիմումը վարույթ ընդունելուց հետո շուրջ հինգ ամիս դատավարության իրականացումը, իսկ վերջնարդյունքում դիմումի մերժումը՝ արտադատական կարգը չպահպանելու հիմքով, ըստ էության սահմանափակել է ինչպես անձի հիմնարար դատական պաշտպանության իրավունքը, այնպես էլ դիմումատուն տևական ժամանակահատված զրկված է եղել ակնկալվող իրավաբանական փաստի հաստատման արդյունքում իր սուբյեկտիվ իրավունքի իրականացման

հնարավորությունից, որպիսի հանգամանքները Խորհրդի գնահատմամբ բացառում են արարքը նվազ կարևոր որակելու իրավական և փաստական հնարավորությունը, ինչը հատկապես արդիական է դառնում, երբ խոսքը գնում է երեխայի իրավունքների մասին:

Խորհուրդը գտել է նաև, որ դատական պաշտպանություն հայցող սուբյեկտները, դիմում կամ հայցադիմում ներկայացնելով դատարան, առաջնորդվում են Դատավորի՝ դատավարական ընթացակարգերին տիրապետելու կանխավարկածով, մինչդեռ հետագայում դատավարական ընթացակարգերի այնպիսի խախտումները, որոնք հանգեցնում են դատավարության մասնակիցների դատական պաշտպանության իրավունքի և այլ սուբյեկտիվ իրավունքների սահմանափակմանը, ըստ էության կասկածի տակ են առնում ինչպես դատավորի համապատասխանությունը իր պաշտոնին, այնպես էլ որպես հետևանք, հեղինակազրկում են դատական իշխանությունը, նվազեցնելով հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Հիմք ընդունելով նաև Դատավորի պատճառաբանությունները ու կարգապահական վարույթի առնչությամբ տրված բացատրությունը՝ Խորհուրդը գտել է, որ դատավորը վարքագծի կանոնների խախտումները թույլ է տվել դիտավորությամբ:

Սույն գործի հանգամանքների և հիմնավորումների պայմաններում Խորհուրդը ընտրել է խիստ նկատողություն պատասխանատվության տեսակը, ինչի ընտրության առնչությամբ հիմնավորումներ, սակայն, չեն տրվել[35]:

Կարգապահական խախտում արձանագրված մեկ այլ գործով Խորհուրդը խախտման առկայությունը հիմնավորել է նրանով, որ քրեական հետապնդման վաղեմության ժամկետը լրացած լինելու հանգամանքին ուշադրություն չդարձնելով դատավորը անուշադրության է մատնել իր ձևավորած դիրքորոշման արդյունքում պարտադիր առաջ եկող հետևանքները, մասնավորապես՝ վաղեմության ժամկետը լրացած ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածով առաջադրված մեղադրանքով անձի կալանավորման անհնարինությունը: Ըստ Խորհրդի՝ դատավորի կողմից խախտումը կատարվել է ոչ դիտավորությամբ, միաժամանակ դատավորը դրսևորել է կոպիտ անփութություն, քանի որ պարտավոր էր և կարող էր գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը: Խախտման համար պատասխանատվության միջոց է ընտրվել նկատողությունը[36]:

Ինչպես այս, այնպես էլ առաջին նկարագրված դեպքում Խորհուրդը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ դատավորը նախկինում կարգապահական տույժի ենթարկված չի եղել:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ մեկ այլ որոշմամբ Խորհուրդը հիմնավորումների հիմքում դրել է այն հանգամանքը, որ քրեական գործով Դատավորը, մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժելով, թույլ է տվել

[35] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-5-Ո-Կ-2 որոշում:

[36] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-23-Ո-Կ-5 որոշում:

դատավարական իրավունքի խախտում, ինչի արդյունքում Դատարանը հանգել է սխալ եզրակացության, որ մեղադրյալի արարքում բացակայում է հիմնավոր կասկածը և դրա առնչությամբ չի անդրադարձել կալանավորման հիմքերին:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ Դատարանը, ըստ էության, ղեկավարվել է մինչև 2019 թվականի նոյեմբերի 14-ը գործող քրեական օրենսգրքով և դրա համատեքստում՝ հանգել է այն հետևության, որ մեղադրյալին վերագրվող ենթադրյալ արարքի փաստական նկարագրության մեջ բացակայում են գույքի գաղտնի հափշտակությունը զգալի չափերով կատարելու (կատարելու փորձի) վերաբերյալ հիմնավորումները և գտել, որ արարքի փաստական նկարագրության մեջ ձևականորեն նշվել է հանցագործության հատկանիշ հանդիսացող զգալի չափով եզրույթը: Մինչդեռ, արարքը Քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով որակելու համար, տվյալ դեպքում «զգալի չափ» եզրույթ օրենսդիրը չի նախատեսել:

Խորհուրդը հանգել է նրան, որ դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմի խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ, քանի որ դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը[37]:

Այս գործով ԲԴԽ-ն դատավորի նկատմամբ կարգապահական տույժի տեսակն ընտրելիս հաշվի է առել այն հանգամանքը, որ դատավորի աշխատանքային ծանրաբեռնվածությունը հանգրեցրել է նրան, որ հստակ չի վերլուծել նախկին և գործող իրավակարգավորումները, նաև արձանագրել է այն, որ կարգապահական պատասխանատվության հարցի քննության պահին դատավորը կարգապահական տույժ չի ունեցել: Խորհրդի կողմից դատավորին հայտարարվել է նախազգուշացում:

Այս դեպքում, փաստորեն, Դատավորի ծանրաբեռնվածությունը Խորհրդի գնահատվել է որպես հանգամանք, որով հիմնավորվել է դատավորի կողմից օրենսդրական կարգավորումների փոփոխություններին չտիրապետելը և ընտրված պատասխանատվության առավել մեղմ միջոցի հիմք է հանդիսացել:

Ուսումնասիրված կարգապահական վարույթների մեջ, ինչպես արդեն տեսանք, առկա է նաև օրենսդրությամբ նախատեսված ժամկետները խախտելու հիմքով հարուցված վարույթների խումբ:

Այս վարույթներից մեկի շրջանակներում դատավորը թվով 35 քաղաքացիական գործով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները հայցվորին է ուղարկել կայացնելուց հետո 2-6 ամիս հետո, այսինքն ուշացած, Խորհուրդը կրկին արձանագրել է որ Դատավորի կողմից թույլ տրված խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ: Խորհուրդը արարքի որակումը հիմնավորել է նրանով, որ դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել այնքանով, որքանով չի հիմնավորվել դատավարական նորմով սահմանված ժամկետի խախտումները՝ որևէ արդարացված նպատակով: Միաժամանակ, Խորհուրդը գտել է,

37 Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-35-Ո-Կ-7 որոշում:

որ Դատավորի կողմից գործերի քննության ժամկետի խախտումը և դատական ակտերը կողմերին օրենքով սահմանված ժամկետից ուշ ուղարկելը, հանգեցրել են նաև դատավորի վարքագծի կանոնի խախտման՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրային վստահությունը նվազեցնող վարքագծից զերծ մնալու և ի պաշտոնե գործելիս առանց արդարադատության շահերը վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ իր իրավասությանը վերապահված հարցերը քննելու և լուծելու պահանջների խախտման:

Անդրադառնալով դատավորի այն բացատրությանը, որ դատական ակտերը դատավարության կողմերին օրենքով նախատեսված ժամկետից ուշ ուղարկելը պայմանավորված է եղել դատավորի գերծանրաբեռնվածությամբ, Խորհուրդը գտել է, որ դա, ըստ էության, չի բովանդակում այնպիսի ծանրակշիռ հիմնավորումներ, որոնց հիմքով հնարավոր կլինի տվյալ իրավիճակում ենթադրյալ խախտումները համարել արդարացված որևէ ողջամիտ պատճառաբանությամբ: Ինչ վերաբերում է այն պատճառաբանությանը, որ պատշաճ դատական ակտեր կայացնելը դատավորը ավելի կարևոր է դիտարկում, քան դրանից հետո իրականացվող գործողություններին հետևելը, ապա դա իմաստազուրկ է, քանի որ դատական ակտի կայացման համար օրենսդրությունը սահմանել է հստակ պահանջներ, որի խստիվ պահպանմամբ արդարադատության իրականացումը դատավորի առաջնային պարտականությունն է:

Այս դեպքում նույնպես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատավորը նախկինում չի ունեցել կարգապահական տույժ, Խորհուրդը որոշել է դատավորի նկատմամբ կիրառել նախազգուշացում կարգապահական տույժը[38]:

Դատավարական ժամկետների խախտման հիմքով հարուցված վարույթներից մյուսով փաստերը հանգում են նրան, որ հատուկ վարույթով քաղաքացիական գործի քննությունը, ըստ օրենքի, պետք է ավարտած լիներ առնվազն 26.10.2020 թվականին, մինչդեռ դատական նիստերը ձգձգվել են մինչև 25.05.2021 թվականը՝ առանց առավել կարևոր շահի պաշտպանության անհրաժեշտության, իսկ գործով որոշման հրապարակման օր է նշանակվել 16.06.2021 թվականը: Ավելին, եզրափակիչ դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքում տեղադրվել է 18.03.2022 թվականին, այն է՝ օրենքով սահմանված գործի քննության առավելագույն ժամկետից՝ 26.10.2020 թվականից 1 տարի 4 ամիս անց (ընդ որում՝ կարգապահական վարույթ հարուցելուց հետո), իսկ կողմերն այն ստացել են 22.03.2022 թվականին:

Ըստ Խորհրդի՝ գործով դատական նիստեր չհրավիրելը որևէ կերպ չի հիմնավորվում: Ըստ էության, տվյալ քաղաքացիական գործով թույլ է տրվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետների խախտում, որի արդյունքում խաթարվել է վեճերի այլընտրանքային, արտադատական

38 Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-72-Ո-Կ-17 որոշում:

լուծման մեխանիզմների ողջ էությունը: Դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմերի խախտումը, այն է՝ գործերի քննության ժամկետի խախտումը և դատական ակտերը կողմերին օրենքով սահմանված ժամկետից ուշ ուղարկելը, հանգեցրել են նաև դատավորի վարքագծի կանոնի խախտման: Խորհուրդն արձանագրել է, որ Դատավորի կողմից թույլ տրված խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ, քանի որ չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել, այնքանով, որքանով չի հիմնավորել դատավարական նորմով սահմանված ժամկետի խախտումները՝ որևէ արդարացված նպատակով:

Իր հիմնավորումներում Խորհուրդը անդրադարձել է նաև դատավորի այն բացատրությանը, որ Դատավորի գործառույթների մեջ ուղղակի չի մտնում առաքանի ուղարկելը, դատավարական փաստաթղթեր հանձնելը, ինչպես նաև դատական տեղեկատվական համակարգում դատական ակտերը ներբեռնելը, այլ այդ ծառայողական պարտականությունները վերապահված են դատավորի աշխատակազմի համապատասխան դատական ծառայողին: Այս առնչությամբ Խորհուրդը վկայակոչել է իր իսկ նախկին որոշումները առ այն, որ դատավարության մասնակիցներին պատշաճ ծանուցելու առումով իր աշխատակազմի թերացումների կամ անգործության համար պատասխանատվությունը կրում է դատավորը:

Խորհուրդը եզրահանգել է, որ խախտումներն իրենց բնույթի և հետևանքների առումով ստվերում են դատարանի անկախությունն ու անաչառությունը, հանրության մոտ առաջացնում անվստահություն դատական իշխանության անկախության և անաչառության սկզբունքների նկատմամբ, ինչի համատեքստում դատավորին այդ գործով որոշվել է հայտարարել նկատողություն: Խորհուրդը հաշվի է առել դատավորի կողմից կարգապահական տույժ չունենալու հանգամանքը[39]:

Դատավարական ժամկետների խախտմանը վերաբերող մեկ այլ գործով ևս Խորհուրդն արձանագրել է, որ Դատավորի կողմից վճիռը հրապարակման հայտարարված օրվանից մոտ 1 տարի 7 ամիսը հետո հրապարակելը, ինչպես նաև վճռի օրինակը դատավարության կողմերին օրենքով սահմանված ժամկետում չուղարկելը չի կարող որևէ մեկնաբանությամբ համարվել նվազ կարևոր: Տվյալ դեպքում Դատավորը չի դրսևորել պատշաճ ջանասիրություն, ինչի արդյունքում վերջինիս կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավանորմերի խախտում: Խորհուրդը միաժամանակ արձանագրել է, որ Դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմի այս խախտումը հանգեցրել է Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքով սահմանված դատավորի վարքագծի կանոնների խախտման: Խորհուրդը նշել է, որ Դատարանի նման վարքագծի դրսևորումը անկողմնակալ դիտորդի տեսանկյունից կարող է ողջամտորեն կասկած հարուցել նաև Դատարանի անկախության և անաչառության հարցում, դրանով իսկ նվազեցնելով հանրային վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Այս գործով ևս հաշվի է առնվել, որ կարգապահական

[39] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-49-Ո-Կ-10 որոշում:

պատասխանատվության հարցի քննության պահին Դատավորը չի ունեցել կարգապահական տույժ, և Դատավորին հայտարարվել է նկատողություն[40]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի ուսումնասիրությամբ վերհանված խախտման հիմքով հարուցված վարույթներից մեկով Խորհուրդը գտել է, որ Դատավորն իրեն վերագրվող խախտումները կատարել է կոպիտ անփութությամբ, քանի որ չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել, այնքանով, որքանով իր վարույթում եղած վարչական գործով վճռի շրջանակներում իրականացրել է ոչ պատշաճ քննություն և չի բացահայտել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը և անհիմն կերպով վարչական պատասխանատվության է ենթարկել դիմումատուին, ինչը վկայում է Դատավորի կողմից իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը չգիտակցելու մասին: Սույն գործով Խորհուրդը Դատավորին հայտարարել է խիստ նկատողություն:

ՄԻԵԴ վճռի ուսումնասիրության հիմքով հարուցված մյուս վարույթը Խորհրդի կողմից թողնվել է առանց քննության՝ Բարձրագույն դատական խորհրդում հարցի քննության օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու հիմքով: Ինչպես վերը նշվեց, ԲԴԽ-ում գործի քննությունը տևել է երեք ամիս և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Արդարադատության նախարարի միջնորդությունը թողնվել է առանց քննության, քանի որ առկա չեն եղել Օրենսգրքի 90-րդ հոդվածով նախատեսված՝ վարույթի ժամկետը երկարաձգելու հիմքերը: Անհրաժեշտ է, սակայն, փաստել, որ վարույթը վերաբերել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հաստատված դատավորի վարքագծի արդյունքում դիմումատուին Կոնվենցիայի 3-րդ հոդվածով՝ խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու բացարձակ իրավունքի խախտման հարցի[41]:

3. 2. Էական կարգապահական խախտման հիմքով դատավորի լիազորությունների դադարեցումը որպես տույժ կիրառելու դեպքերը

2022թ. ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորի լիազորությունները դադարեցնելու կարգապահական տույժը կիրառվել է երեք վարույթով: Գործերից երկուսը վերաբերել են դատավորների, մեկը՝ ԲԴԽ դատավոր անդամին՝ լիազորությունները կասեցված նախագահին:

Դատավորի կողմից վարքագծի կանոնի խախտմանն առնչվող վարույթներից մեկով, ըստ գործի հանգամանքների և առկա ապացույցների, դատավորի մասնակցությամբ տեղի ունեցած վթարից հետո դատավորը հրաժարվել է ենթարկվել

[40] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-105-Ո-Կ-25 որոշում:

[41] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-80-Ո-Կ-21 որոշում:

իրենց պաշտոնական լիազորություններն իրականացնող ոստիկանների պահանջներին: Խորհուրդը, հենվելով ներպետական օրենսդրության վրա, արձանագրել է, որ եթե քաղաքացիները պարտավոր են ենթարկվել ոստիկանների պահանջներին, ապա դատավորների պարագայում անընդունելի է ոստիկանության ծառայողի պահանջների չկատարումը: Ըստ Խորհրդի՝ քննարկվող դեպքում Դատավորը չի ենթարկվել ոստիկանության ծառայողի պահանջներին՝ կասկածի տակ դնելով դրանց օրինականությունը: Ավելին, Դատավորի վարքագիծը զուգորդվել է ոստիկանի նկատմամբ անպարկեշտ արտահայտությամբ, ինչպիսի վարքագիծը հասարակության կողմից չի կարող ընկալվել որպես իրավիճակի օբյեկտիվ գնահատականի արտահայտում, առավել ևս դատավորի բարձր կարգավիճակին հարիր վարքագիծ: Ըստ Խորհրդի՝ դատավորի վարքագծի կանոններից, ինչպես նաև դրանց վերաբերյալ առկա մեկնաբանություններից հետևում է, որ վերջինս պարտավոր է լինել քաղաքավարի, համբերատար և հարգալից այն բոլոր անձանց նկատմամբ, ում հետ նա կարող է առնչություն ունենալ: Անդրադառնալով մեղքի ձևին՝ Խորհուրդը գտել է, որ Դատավորը վարքագծի կանոնի խախտումը կատարել է դիտավորությամբ՝ չցուցաբերելով իր կարգավիճակին համապատասխան զսպվածություն, հեղինակազրկել է դատական իշխանությունը, մասնավորապես իր գործողությունների համակցությամբ չի ենթարկվել իր պաշտոնական լիազորությունները կատարելիս ոստիկանների օրինական պահանջներին և ոստիկանի նկատմամբ իրեն ոչ վայել արտահայտություններ է թույլ տվել:

Խորհուրդը կարևորել է նաև այն հանգամանքը, որ իրավաչափորեն կարող է ձևավորվել հիմնավոր տպավորություն առ այն, որ եթե Դատավորը դրսևորում է ոչ պատշաճ վարքագիծ առհասարակ, ապա նույնպիսի վերաբերմունք կարող է դրսևորել նաև մասնագիտական պարտականությունների կատարման ժամանակ: Դատավորն իր գործողություններում զերծ չի մնացել դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց, ուստի միջնորդության քննությամբ հաստատված փաստերի հաշվառմամբ, խորհուրդը եկել է եզրահանգման, որ դատավորի կողմից թույլ տված վարքագծի կանոնի խախտումը էական կարգապահական խախտում է, որը համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ: Այս հիմնավորումների համատեքստում՝ Դատավորի վերոնշյալ վարքագիծը Խորհրդի կողմից գնահատվել է որպես դատավորի վարքագծի կանոնների էական կարգապահական խախտում և նրա լիազորությունները դադարեցվել են[42]:

Դատավորի վարքագծի կանոնի խախտմանը վերաբերող մեկ այլ գործով Խորհուրդը գտել է, որ ԲԴԽ նախագահը (լիազորությունները կասեցված) հարցազրույցում կասկածի տակ է առել Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1650 որոշումը և Բարձրագույն դատական խորհրդի բոլոր որոշումները, որոնք կայացվել են 2021թ. հունվարի 22-ից մինչ օրս: Մասնավորապես, ԲԴԽ լիազորությունները կասեցված նախագահը իր հարցազրույցում օգտագործել է

[42] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-24-Ո-Կ-6 որոշում:

հետևյալ արտահայտությունները, որոնք և գնահատման են ենթարկվել ԲԴԽ կողմից. «Կեցցե Սահմանադրական դատարանը: […] «. . առաջարկում եմ պատկերացնել, թե ինչ կլիներ, եթե դիմումը բավարարվեր: Համընդհանուր, տոտալ կոլապս դատական համակարգում, 1,5 տարվա ընթացքում ընդունված բոլոր ԲԴԽ որոշումները վերանայման ենթակա կլինեին՝ լիազորությունների դադարեցումներ, նշանակումներ, տեղափոխություններ, կարգապահական պատասխանատվության վերաբերյալ բոլոր որոշումներ . . . դե հիմա եկեք պատկերացնենք, թե ինչից փրկեց ՍԴ-ն Հայաստանի Հանրապետությանը, նրա իշխանության մի թևին: Ակնհայտ է, որ որոշումը որևէ աղերս չունի իրավաբանության հետ, բայց նորից եմ կրկնում կեցցե Սահմանադրական դատարանը», «. . այս որոշմամբ, ցավոք, բացվեց այն դուռը, որ այս կամ հաջորդ իշխանությունները կարող են գտնել 95-ամյա մի զառամյալ ծերունի իրավաբանի և ուղարկել ԲԴԽ»:

Խորհուրդը գտել է, որ ԲԴԽ լիազորությունները կասեցված նախագահի արտահայտություններով կասկածի տակ է դրվել Սահմանադրական դատարանի անկախությունը, հեղինակազրկվել է Բարձրագույն դատական խորհուրդը և դատական իշխանությունը, քանի որ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն անմիջականորեն կապված են դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ, որոնց թվում կան որոշումներ, որոնք Խորհուրդը կայացրել է որպես դատարան: Խորհուրդը գտել է, որ նշված արտահայտություններով խախտվել են Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 6-րդ և 8-րդ կետերով նախատեսված դատավորի վարքագծի ընդհանուր կանոնների պահանջները, մասնավորապես արտահայտությունները վարկաբեկում են դատական իշխանությունը, նվազեցնում են հանրության վստահությունը դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ: Արտահայտությունները հրապարակայնորեն կասկածի տակ են առնում Սահմանադրական դատարանի և Բարձրագույն դատական խորհրդի գործողությունները, դատական ակտերը, վտանգում և կասկածի տակ են առնում դատավորի և դատարանի անկախությունը և անաչառությունը: Խորհուրդը գտել է, որ դատավորի վարքագծի կանոնների խախտումը տեղի է ունեցել դիտավորյալ, քանի որ հանդիսանալով դատավոր, ԲԴԽ անդամ և նախագահ՝ անձը պարտավոր է իմանալ դատավորի վարքագծի կանոնները և զերծ մնալ դատարանի գործողությունները, դատական ակտերը հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց: Ավելին, հարցազրույցը տալու պահին Սահմանադրական դատարանի որոշման տեքստը դեռևս հրապարակված և հասանելի չէր, և առանց որոշման հիմնավորումները կարդալու այն կասկածի տակ դնելը վկայում է դիտավորության առկայության մասին:

Այդպիսով, Խորհրդի գնահատմամբ՝ ԲԴԽ լիազորությունները կասեցված նախագահը զերծ չի մնացել Սահմանադրական դատարանին և Բարձրագույն դատական խորհրդին վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող, դատարանի անկախությունը և անաչառությունը վտանգող ու կասկածի տակ առնող հայտարարություններ անելուց, ինչպես նաև զերծ չի մնացել ինչպես այդ մարմինների, այնպես էլ անուղղակի կերպով այլ դատավորների դատական ակտերը

հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց: Ընդ որում, այդ գործողությունները կատարվել են պաշտոնյա հանդիսացող Բարձրագույն դատական խորհրդի նախագահի կողմից մի գործի վերաբերյալ, որը անմիջական նշանակություն ունի դատական իշխանության կազմակերպման ու բնականոն գործունեության համար և դրանք կատարվել են դիտավորությամբ, ինչի պարագայում Խորհուրդը արձանագրել է, որ նման խախտումների միաժամանակյա առկայությունը չի կարող համատեղելի լինել Խորհրդի անդամ/նախագահ/դատավորի կարգավիճակի հետ: ԲԴԽ որոշմամբ Հանձնախմբի միջնորդությունը բավարարվել է և ԲԴԽ անդամ (լիազորությունները կասեցված նախագահ) և դատավորի լիազորությունները դադարեցվել են էական կարգապահական խախտման հիմքով[43]:

Հաջորդ գործով վարույթի հարուցման հիմքում ընկած է եղել այն հանգամանքը, որ չորս քաղաքացիական գործերով Դատավորի կողմից չեն պահպանվել պարզեցված վարույթի կարգով քննվող գործերով վճիռ հրապարակելու և վճռի օրինակը գործին մասնակցող անձանց ուղարկելու համար Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետները: Դատավորի կողմից վարույթի ընթացքում խախտման փաստն ընդունվել է՝ պատճառաբանելով դատավորի ծանրաբեռնվածությունը:

Այս դեպքում Խորհուրդը արձանագրել է, որ դատարանների գերծանրաբեռնվածության փաստի ուժով դատավարական ժամկետների խախտումներ կարող են տեղի ունենալ, մինչդեռ դրանք պետք է լինեն ողջամիտ և արդարացված այնքանով, որ չհանգեցնեն դատավարության մասնակիցների հիմնարար իրավունքների և ազատությունների էական սահմանափակումների և խախտումների: Ըստ Խորհրդի՝ յուրաքանչյուր կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի գերծանրաբեռնվածության հանգամանքով պայմանավորված դատավարական ժամկետների խախտումները ենթակա են գնահատման տվյալ վարույթի շրջանակներում դատավորի կողմից ներկայացված բացառիկ հանգամանքների և հիմնավորումների սահմաններում: Դատավորի փաստարկը գերծանրաբեռնված լինելու հանգամանքներում դատավարական ժամկետների խախտման վերաբերյալ, ըստ Խորհրդի, չի բովանդակում այնպիսի բացառիկ հանգամանքներ և հիմնավորումներ, որոնց հիմքով հնարավոր կլինի տվյալ իրավիճակում Դատավորի կողմից կատարված խախտումները համարել արդարացված որևէ ողջամիտ պատճառաբանությամբ: Միաժամանակ, նշվել է, որ 4 քաղաքացիական գործերը քննվել են պարզեցված վարույթի կարգով, ինչը հավաստում է, որ Դատավորը պարտավոր էր և կարող էր սահմանված ժամկետների պահպանմամբ կատարել բոլոր անհրաժեշտ դատավարական գործողությունները: ԲԴԽ-ն նշել է նաև, որ 2019թ. ից վեր երկու անգամ Դատավորի անուն-ազգանունը գործերի բաշխման ցուցակից հանվել է համապատասխանաբար երկու ամիս և 15 օր ժամկետով:

Խորհուրդը անդրադառնալով Դատավորի կողմից կատարված խախտումների բազմակիությանը, կարևորել է այն, որ Դատավորի կողմից երկու կամ ավելի գործերով

[43] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-24-Ո-Կ-6 որոշում:

թույլ տված դատավարական կամ նյութական նորմերի խախտումները վկայում են խախտման արդյունքում արդարադատության հեղինակազրկման վտանգավորության աստիճանի մասին: Խորհրդի գնահատմամբ չորս քաղաքացիական գործերով համապատասխանաբար շուրջ մեկուկես, մեկ, մեկուկես և ավելի քան 2 տարի անց վճիռները հրապարակելը և գործով հայցվորին ուղարկելը ոչ իրավաչափ գործողություն է, որը հեղինակազրկում է դատական իշխանությունը և էապես նվազեցնում է դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը և վնասում է դատավորի բարձր պաշտոնի հանրային ընկալումը:

Խնդրո առարկա դատական գործերի շրջանակներում կիրառելի իրավանորմերի հստակությունը և իմպերատիվ բնույթը թույլ է տալիս եզրակացնել, որ Դատավորն ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր տեղյակ լինել վերաբերելի իրավակարգավորումներին և դրանք խախտելու հնարավոր հետևանքներին: Հետևաբար, ըստ Խորհրդի՝ Դատավորի կողմից նշված դատավարական նորմի խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ:

Միաժամանակ, Խորհուրդը գտել է, որ Դատավորի կողմից թույլ են տրվել դատավորի վարքագծի կանոնների՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրային վստահությունը նվազեցնող վարքագծից զերծ մնալու և ի պաշտոնե գործելիս առանց արդարադատության շահերը վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ իր իրավասությանը վերապահված հարցերը քննելու և լուծելու պահանջների խախտում:

Դատավորի նկատմամբ տույժի տեսակի ընտրության հիմնավորումներում ԲԴԽ կողմից արձանագրվել է, որ տվյալ դեպքում որոշման հրապարակման և դրա մասին շահագրգիռ կողմերի ծանուցման միջև առկա ժամանակահատվածները խնդրո առարկա քաղաքացիական գործերով այնքան երկար էին, որ անխուսափելիորեն հեղինակազրկում են դատական իշխանությունը՝ հանրության աչքերում արդարադատության իրականացումը դարձնելով անկանխատեսելի և անարդյունավետ իրավունքի պաշտպանության միջոց: Դատավորն իր գործողություններով զերծ չի մնացել դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրային վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց, ուստի միջնորդությամբ հաստատված փաստերի հաշվառմամբ, Խորհուրդը եկել է այն եզրահանգման, որ Դատավորի կողմից թույլ տրված վարքագծի կանոնի խախտումն էական կարգապահական խախտում է, որը համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ: Դատավորի լիազորությունները դադարեցվել են էական կարգապահական խախտման հիմքով[44]:

[44] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-116-Ո-Կ-27 որոշում:

3. 3. Կարգապահական խախտման բացակայություն արձանագրող որոշումների հիմնավորումները

Կարևոր է անդրադառնալ նաև այն որոշումների հիմնավորումներին, որոնցով Խորհուրդը մերժել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկել:

Գործերից մեկով, որտեղ վարույթի հարուցման հիմք է հանդիսացել վերաքննիչ քաղաքացիական դատարանում բանավոր ընթացակարգով քննվող գործերը գրավոր ընթացակարգի փոխելը, Խորհուրդը որոշել է պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժել: Խորհուրդն արձանագրել է, որ բողոքի քննության բանավոր ընթացակարգի ընտրությունը եղել է Վերաքննիչ դատարանի նախաձեռնությունը, նշված որոշման փոփոխումը պայմանավորված է եղել որոշակի այնպիսի հանգամանքների հավասարակշռմամբ, որի արդյունքում վերացել է այդ նպատակահարմարությունը, ինչի վերաբերյալ ներկայացվել է պատճառաբանություն և էական է հանդիսանում նաև այն հանգամանքը, որ դատավարության մասնակիցները, ստանալով դատարանի որոշումը գրավոր եղանակով բողոքի քննությունը շարունակելու վերաբերյալ, որևէ կերպ դիրքորոշում չեն ներկայացրել այդ կապակցությամբ:

Անդրադառնալով վարույթ հարուցողի այն փաստարկին, որ վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի քննությունը գրավոր կարգով իրականացնելու վերաբերյալ որոշման կայացմամբ կողմերը զրկվել են բողոքի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու իրավունքից, ինչը հանգեցրել է լսված լինելու իրավունքի անհարկի սահմանափակմանը, ապա Խորհուրդը նախ նշել է, որ լսված լինելու հիմնարար իրավունքը լայն հասկացություն է, չի սահմանափակվում միայն վերաքննիչ դատարանում բանավոր լսումներին մասնակցելու և բանավոր եղանակով դիրքորոշում հայտնելու հնարավորությամբ, այն ներառում է նաև մասնակիցների կողմից քննարկվող հարցի կապակցությամբ գրավոր եղանակով դիրքորոշումներ հայտնելը, առարկություններ ներկայացնելը, որին համապատասխանում է դատարանի պարտականությունները ընդունելու և քննարկման առարկա դարձնելու այդ դիրքորոշումներն ու փաստարկները:

Տվյալ դեպքում, հիմք ընդունելով գործում առկա փաստերը, Խորհուրդը գտել է, որ վարույթ հարուցած մարմնի կողմից չի ներկայացվել որևէ փաստարկ, որից հնարավոր կլիներ եզրահանգում կատարել անձի լսված լինելու իրավունքի և/կամ դրա բաղադրատարրերի սահմանափակման վերաբերյալ: Ըստ այդմ, ըստ Խորհրդի՝ Դատարանի կողմից թույլ չի տրվել դատավարական խախտում[45]:

Գործերից մյուսը վերաբերել է խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ

[45] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-7-Ո-Կ-3 որոշում:

երկարացնելուց հրաժարվելու օրինականության հիմքով հարուցված կարգապահական վարույթի, որի շրջանակներում Խորհուրդը քննարկել է վերաբերելի կարգավորումները, Վճռաբեկ դատարանի մոտեցումները և հանգել նախ այն եզրակացության, որ օրենքով մինչդատական վարույթի ընթացքում որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշումների օրինականության և հիմնավորվածության սահմանների և կարգի մասով նախատեսվում է դատական ստուգման համապատասխան ընթացակարգ, այդ թվում՝ նաև դրա արդյունքում կայացվող որոշումների իմաստով: Այնուհետ, անդրադառնալով գործի փաստերին և կարգավորումներին՝ Խորհուրդը գտել է, որ դատավորի կողմից պահպանվել են ՀՀ օրենսդրության պահանջները, ինչի հիմքով միջնորդությունը մերժվել է[46]:

Մեկ այլ դեպքում, Խորհուրդը կրկին մերժել է միջնորդությունը, գտնելով, որ խորհրդակցական սենյակում գործի ելքի վերաբերյալ կայացված որոշման եզրափակիչ մասի դատական նիստի ժամանակ բարձրաձայն ընթերցումը կոլեգիալ դատական կազմում ընդգրկված այլ դատավորի կողմից, և ոչ նախագահող դատավորի կողմից, միտված է եղել ապահովելու օրենքով սահմանված սեղմ ժամկետների պահպանմամբ հանրային կարևորություն ունեցող վեճի դատական կարգով լուծումը հանրության ավելի լայն շրջանակներին դատական ակտին հաղորդակից դարձնելուն: Խորհուրդը կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժել է նաև այն հիմնավորմամբ, որ դատավորը հիվանդությամբ պայմանավորված օբյեկտիվ պատճառով ֆիզիկապես ներկա չլինելով դատական ակտի հրապարակմանը, չի խուսափել արդարադատություն իրականացնելուց և իրական երաշխիք ստեղծելով, հետամուտ է եղել դատավարության մասնակիցների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների պահպանմանը[47]:

Այսինքն, նույն հանգամանքը Խորհրդի կողմից մեկնաբանվել է որպես արդարադատության շահի ապահովում, քանի որ տեղի է ունեցել օրենքով նախատեսված ժամկետում գործի ավարտի ապահովում, մինչդեռ վարույթ հարուցող մարմինը այն որակել է որպես խախտում:

Հարուցված վարույթներից մեկը վերաբերել է կերակրողի մահվամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի ծագման հարցին: Մասնավորապես, դատավորը իր վճռով բավարարել է կերակրողի մահվամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին հայցը՝ պատասխանողի վրա դնելով նաև կերակրողի ամուսնուն՝ հայցվորին պատճառված վնասը հատուցելու պարտականություն այն դեպքում, երբ հայցվորի՝ վնասի հատուցում ստանալու իրավունքի ծագման վավերապայմաններից մեկը հավաստող ապացույց, ամուսնության պետական գրանցման վկայական, ներկայացված չի եղել: Վերջինիս քննության արդյունքում Խորհուրդը գտել է, որ օրենսդիրը, սահմանելով կերակրողին կորցնելու դեպքում վնասի հատուցում ստանալու իրավունքը, միաժամանակ սահմանել է վնասի հատուցում ստանալու

[46] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-61-Ո-Կ-13 որոշում:
[47] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-20-Ո-Կ-4 որոշում:

իրավունք ունեցող անձանց շրջանակը: Մասնավորապես, նման իրավունք ունեցող անձանց շրջանակում ընդգրկել է նաև ընտանիքի անդամին, վերջինիս համար՝ տուժողի մահվան դեպքում վնասի հատուցման իրավունքի իրացման հարցում նախատեսելով մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Ավելին, Խորհուրդը արձանագրել է, որ երեխայի հոր մահից հետո նրա հոր հետ ամուսնության մեջ չգտնվող մորը, ում խնամքին գտնվում է մահացածի խնամքի տակ եղած երեխան, Դատարանի կողմից որպես պատշաճ սուբյեկտ ընտանիքի անդամ դիտարկելը չի կարող համարվել նյութական իրավունքի նորմի խախտում[48]:

Մեկ գործով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կարճվել է, քանի որ դատավորը ներկայացրել է հրաժարականի դիմում, ինչի հիման վրա վերջինիս լիազորությունները դադարեցվել են[49]:

[48] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-43-Ո-Կ-9 որոշում:
[49] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-61-Ո-Կ-12 որոշում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

2022թ. Բարձրագույն դատական խորհրդի կողմից քննվել են 24 վարույթներ՝ 23 վարույթներով դատավորներին և մեկով Խորհրդի անդամի կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Ընդ որում, ներկայացված միջնորդությունների մեծամասնությունը՝ 18-ը ներկայացված է եղել Արդարադատության նախարարի կողմից, 4-ը Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից, 1-ը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից և 1-ը՝ ԲԴԽ հանձնախմբի կողմից:

Քննության արդյունքում Խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունները բավարարվել են 11 վարույթով, որոնցից 3-ով՝ դատավորների, այդ թվում՝ ԲԴԽ անդամ դատավորի լիազորությունները դադարեցվել են: Անհրաժեշտ է փաստել, որ ԲԴԽ-ի կողմից կայացված որոշումներով բավարարվել են Արդարադատության նախարարի կողմից հարուցված 18 վարույթներով ներկայացված միջնորդություններից 9-ը, 7 միջնորդություն մերժվել է և 2 վարույթ թողնվել է առանց քննության: Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից հարուցված 4 կարգապահական վարույթներով միջնորդություններից բավարարվել է 1-ը, 2 միջնորդություն մերժվել է, մեկ միջնորդության քննության վարույթը կարճվել է: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված մեկ միջնորդության քննության վարույթը կարճվել է: Խորհրդի հանձնախմբի կողմից հարուցված կարգապահական վարույթով միջնորդությունը բավարարվել է:

Մշտադիտարկված նիստերի և կայացված որոշումների ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել դատավորների կարգապահական պատասխանատվության հարուցման և որոշման կայացման հետ կապված հիմնական խնդիրները:

Առանձին դեպքերում հստակ և բավարար չեն վարույթ հարուցող մարմնի կողմից հարուցված վարույթների հիմքերի իրավաչափությունն ու հիմնավորվածությունը, դրանց ծանրակշռությունը, ինչը հարցեր է առաջացնում հարուցված կարգապահական վարույթների հետապնդող նպատակների առնչությամբ: Այս մասին են վկայում առանձին դեպքերում Արդարադատության նախարարի կողմից ներկայացված միջնորդությունների մերժումները՝ դատավորների արարքում իրավունքի նորմի խախտումներ չլինելու հիմքով:

Խորհրդի կողմից ոչ բոլոր գործերով կայացված որոշումներն են միատեսակ խորությամբ հիմնավորված: Կախված գործի հանգամանքներից և

առանձնահատկություններից՝ Խորհրդի կայացրած որոշումները տարբերվել են, միևնույն ժամանակ, սակայն, առանձին գործերով նկատվել է խախտման հիմքում ընկած հանգամանքների մանրակրկիտ ուսումնասիրություն և վերլուծություն, իսկ որոշ դեպքերում չնայած առկա հարցադրումներին, տրված հիմնավորումներն ու վերլուծությունը խորքային չեն եղել:

Այս համատեքստում, ուշադրության է արժանի Խորհրդի կողմից Դատավորի կողմից խախտման կատարման մեղավորության՝ կոպիտ անփութության և դիտավորության մեկնաբանության և որակման տարբերություններն ու առանձնահատկությունները: Առանձին որոշումներում տրված մեկնաբանությունները բավարար չեն, որոշումներով մեջբերվում են բացառապես օրենսդրական կարգավորումները, սակայն կոնկրետ գործի հանգամանքների ներքո որակման հիմնավորումը հստակ և բավարար չէ:

Նույն մտահոգությունը առկա է հատկապես կարգապահական խախտումները որպես էական որակելու և դատավորի լիազորությունների դադարեցման դեպքերում: Այս հարցն առավել մտահոգիչ է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չէ Բարձրագույն դատական խորհրդի կողմից կայացվող դատական ակտի բողոքարկման իրավունքի ապահովման արդյունավետ մեխանիզմ:

Խորհրդի կողմից դատավորների ծանրաբեռնվածության հանգամանքին տրված մեկնաբանությունների համատեքստում հստակ չէ, թե որ դեպքերում է ծանրաբեռնվածությունը դիտարկվում որպես կարգապահական խախտման մեղմացնող հանգամանք և ազդում պատասխանատվության միջոցի վրա: Մասնավորապես, եթե դատավարական ժամկետների պահպանման խնդիրներին վերաբերող վարույթների առնչությամբ դատարանի ծանրաբեռնվածությունը որևէ դեպքում որպես արդարացում չի դիտարկվել, դատավորի կողմից օրենսդրական փոփոխություններին չտիրապետելու և ըստ այդմ իրավունքի նորմի խախտում թույլ տալու դեպքում ծանրաբեռնվածության հանգամանքը Խորհրդի կողմից գնահատվել է և դրվել դատավորի նկատմամբ ամենամեղմ կարգապահական տույժի տեսակի ընտրության հիմքում:

Շարունակում է խնդրահարույց մնալ Խորհրդի կողմից պատասխանատվության միջոցների ընտրության հիմնավորվածության հարցը: Ուսումնասիրված գործերով կիրառված պատասխանատվության միջոցների ընտրության չափանիշները և հիմնավորումները բավարար և հստակ չեն: Հիմնական հանգամանքը, որը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներում մատնանշվել է որպես հիմնավորում, դատավորի՝ կարգապահական պատասխանատվության հարցի քննության պահին կարգապահական տույժ չունենալն է եղել:

Խորհրդի կողմից ընտրված կարգապահական տույժի վերաբերյալ բավարար հիմնավորումներ չներկայացնելու պայմաններում խնդրահարույց է դատավորի

կողմից թույլ տրված խախտման և ընտրված կարգապահական տույժի միջև համաչափության սկզբունքի պահպանման հարցը:

Թեև ուսումնասիրված գործերով Խորհրդի կողմից կարգապահական վարույթի քննությունը տևել է հիմնականում մեկ կամ երկու ամիս, այդ թվում՝ բավականին կարճ ժամանակահատվածում վարույթի ավարտմամբ, արձանագրվել են դեպքեր, երբ վարույթն էականորեն ձգձգվել է Խորհրդի կողմից, նիստերի միջև ընկած ժամանակահատվածը եղել է անհիմն և արհեստականորեն երկար, ինչն ազդել է դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վրա՝ վարույթը կարճելու կամ առանց քննության թողնելու արդյունքում դատավորները ազատվել են պատասխանատվությունից: Ընդ որում, գործերից մեկը վերաբերել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով հաստատված դատավորի վարքագծի արդյունքում անձին անմարդկային վերաբերմունքի ենթարկելու հարցին: Խորհրդի կողմից վարույթի քննության ձգձգումների արդյունքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Արդարադատության նախարարի միջնորդությունը թողնվել է առանց քննության: Մյուս դեպքը վերաբերել է Դատավորի հայտարարագրի վերլուծության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությանը, որով վարույթը կարճվել է Դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով:

Թեև ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատավորները մասնակցում են դատական նիստերին, ներկայացնում իրենց դիրքորոշումներն ու միջնորդությունները, ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ գործերից մեկով քննությունն իրականացվել է մեկ նիստի ընթացքում առանց դատավորի մասնակցության այն դեպքում, երբ ներկայացուցչի կողմից միջնորդություն էր ներկայացվել դատական նիստը հետաձգելու վերաբերյալ:

Արձանագրվել է նաև, որ Խորհրդի կողմից կայացված վերջնական դատական ակտերը երկու վարույթով չեն հրապարակվել դատական իշխանության պաշտոնական կայքի համապատասխան բաժնում, ինչն ազդում է Խորհրդի կայացված որոշումների հրապարակայնության ապահովման վրա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վարույթ հարուցելու լիազորություն ունեցող մարմինների և հատկապես Արդարադատության նախարարի կողմից երաշխավորել դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության վարույթ հարուցելու հիմքերի պատշաճ հիմնավորվածությունը:
2. Պրակտիկայում երաշխավորել Բարձրագույն դատական խորհրդի որոշումների պատշաճ հիմնավորվածությունը, մասնավորապես՝ դատավորի արարքի որակման, մեղավորության կամ մեղքի ձևի, ինչպես նաև նրա նկատմամբ կիրառվող կարգապահական տույժի տեսակի վերաբերյալ ներկայացնել հստակ և բավարար պատճառաբանություններ և հիմնավորումներ:
3. Պրակտիկայում երաշխավորել դատավորների ծանրաբեռնվածության վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի միասնական մոտեցման ձևավորումն ու կիրառումը:
4. Պրակտիկայում բացառել Բարձրագույն դատական խորհրդում կարգապահական պատասխանատվության վարույթի քննության արհեստական ձգձգումները՝ հանգեցնելով դատավորների կարգապահական պատասխանատվությունից ազատման:
5. Պրակտիկայում բացառել դատավորի կողմից օրենսդրության մեկնաբանության և արտահայտած դիրքորոշումների հիմքով կարգապահական վարույթի հարուցումը:
6. Պրակտիկայում բացառել առանց դատավորի մասնակցության կարգապահական պատասխանատվության վարույթների քննությունը՝ երաշխավորելով դատավորի լսված լինելու իրավունքի պատշաճ իրականացման հնարավորությունը:
7. Օրենսդրությամբ առավել հստակեցնել կարգապահական պատասխանատվության հիմքերն ու երաշխավորել պրակտիկայում դրանց միատեսակ մեկնաբանությունը:
8. Օրենսդրությամբ նախատեսել Բարձրագույն դատական խորհրդի դատական ակտերի բողոքարկման արդյունավետ մեխանիզմ: